

1679

17
4-92

1898

2010

15X
295

ՀՊ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՎՎԵԴԵՆՅԱԿԻ

(Պրօֆեսոր Ս.-Պետէրբուրգի համալսարանի)

Ի՞նչ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԿԱՐԵԼԻ է ՀԱԽԱՏԱ

ԿԵՇՆՔԻ ԽՈՐՀՔԻՒՆ

ԹԱՐԳՄ. ՅՈՎԱՆՆԻՍ ԲԱՐԻՈՒԴԵՐԵԸՆ

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան Մն. Մարտիրոսեանցի

Միքայէլեան փողոց, տուն № 81.

1898.

„Առօտեցի բանության մասը Հայ. Եպիսկոպոսից
1898 ՀՅ ամիս.

100 5775

134-ԿԳ.

ԿՐ.

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՎՎԵԴԵՆՍԿԻ

(Պրօֆեսոր Ս.-Պետերբուրգի համալսարանի)

17
4-92

50

Ի՞՞շ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԿԱՐԵԼԻ Է ՀԱՒԱՏԱ

ԿԵ՛ԱՆՔԻ ԽՈՐՀԾՐԴԻՆ

100
1881



ԹԱՐԳՄ. ՅՈՎՀԵՆՆԵՍ ԲԱՐԻՍՈՒԹՅՈՒՆՆԵ

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան Մն. Մարտիրոսեանցի
Միքայելեան փողոց, տուն № 81.
1898.

2061

9|81

Дозволено цензурою, Тифлисъ, 15-го Апрѣля 1898 года.

Պիշ չէ պատահում մեղ լրել զանազան կարծիքներ կեանքի խորհրդի մասին, այն է թէ ի՞նչի մէջ պէտք է նա կայանայ ու թէ ի՞նչպէս պէտք է մեր կեանքը կանոնաւորներ, որ նա չըլինի անխորհուրդ, գա երիտասարդների մտածութեան ամենասիրելի առարկաներից մէկն է։ Բայց խօսելով կեանքի խորհրդի մտսին, մարդ մեծ մասամբ մոռացութեան է տալս հարցնել իրեն թէ ի՞նչ պայմաններում թոյլարելի է խօսել կեանքի խորհրդի մասին, աշքի առաջ ունենալով «վսորհուրդ» բառի ոչ ընդհանուր գործածութիւնը, որի հետ կապուած է առհասարակ այս կամ այն զարգափարը, այլ միշտ գործածելով բառը այն ընդհանուր նշանակութեամբ, որով խօսում ենք մի որկիցէ իրի նշանակութեան, որոշման կամ պիտանութեան մասին։ Ահա այս կարևորագոյն պայմանների բացատրութեանն է նըւիրած այս իմ քննադատութիւնը։ Պարզ է թէ ի՞նչն համարեմ այս աշխատութեանը «Ինչ պայմաններում կարելի է հաւատալ կեանքի խորհրդին» վերնագիրը տուել։ Այդպէս ուրեմն, ես բոլորովին մտագիր չեմ խօսել այն մասին, թէ ի՞նչ է կեանքի խորհրդի, ի՞նչի մէջ է նա կայանում։ Աւելին ասեմ։ Ես չեմ ապացուցելու թէ արդեօք կեանքի խորհրդի նշանակութիւն ունի, թէ նա մի անմիտ երևոյթ է։ Ես ընդունում եմ կեանքի խորհրդի գոյութիւնը, որպէս փաստ։ որպէս մի քիչ թէ շատ տարածուած համոզմոնք, կամ որպէս հաւատ, և պէտք է խօսեմ միայն այն մասին, թէ ի՞նչ պայմանների ներքոյ արամաբանօրէն կարելի է հաւատալ նրա էութեան։

Պարզ բան է, որ խնդրիս համապատասխան նախ պէտք է

պարզաբանել «կեանքի խորհրդի» ընդհանրապէս ընդունուած նշանակութիւնը. իսկ դորա համար էլ իւր ժամանակին պէտք է բացատրել «խորհուրդ» բառի ընդհանուր նշանակութիւնը. երբ մենք մեզ հաշիւ տանք, թէ ինչ է նշանակում «խորհուրդ» բառը, եթէ մենք խօսում ենք մի որեիցէ իրի «խորհրդի» մասին, այն ժամանակ հեշտութեամբ կարելի է խմանալ թէ ի՞նչ պէտք է հասկանանք «կեանքի խորհուրդ» ասելով: Այդ վերջինը բացատրելուց յետոյ կարելի կը լինի պարզաբանել և այս թէ ի՞նչ պայմանների մէջ կարելի է հաւատալ «կեանքի խորհրդին»:

Մի որեէ իրի խորհուրդը ինչի մէջ ենք գտնում մենք, ինչնումն է կայանում այս գաղափարի ընդհանուր գործածութիւնը. հեշտ է մօտաւորապէս պատասխանել: Իրի նշանակութիւնը կամ խորհուրդը գտնում ենք նորա այն ճշմարիտ որոշման, այն է՝ նորա այն իսկական և ոչ առերեսյթ պիտանի լինելու մէջ, այն նպատակի նկատմամբ, որին հասնելու համար մենք այդ իրն ընտրել ենք: Ուրիշ խօսքերով, մենք վերագրում ենք այս կամ այն իրին նշանակութիւն միայն այն գէպքում, երբ նա որոշուած է մի որեիցէ նպատակի համար, երբ իսկապէս պիտանի է այդ նպատակին. եթէ այդ իրը ոչ մի բանի պէտք չէ և եթէ նա որդշուած է մի որեէ նպատակի համար, բայց իսկապէս անյարմար է այդ նպատակին, մենք նորան նշանակութիւն չենք տալիս ու այդ իրն իսկապէս անմիտ բան ենք համարում:

Այսպէս ուշագրութեան առնենք խորհուրդ բառի գործածութեան գէպքելը: Նախ նա զործ է տծուոմ խօսքերով, լինին զորա առանձին առանձին վերցրած, թէ միասին շաղկապած, այդ միենոյն է: Եթէ առանձին վերցրած բառը արտայայտում է մի գաղափար, այսինքն, եթէ նա որոշուած է և իսկապէս պիտանի է մի որեէ «խորհուրդ» արտայայտելու համար, այն ժամանակ նա ունի մի միտք: Իսկ եթէ որոշեալ բառը չէ ծառայում մի այնպիսի նպատակի, կամ այս գէպքում անպէտք է նպատակին հասնելու համար, նորան մենք «խորհուրդ» չենք վերագրում: Այսպէս էլ «խորհուրդ» ունի խօսքերի ամեն մի միութիւն միայն այն գէպքում, եթէ այդ միութեան չխօրհիւ կարսղ ենք մի որեէ գաղափար արտայայտել:

Եթէ իմ արտասանած խօսքերն այնպէս են միաւորւում, այնպէս են շաղկապւում մէկը միւսի հետ, որ այդ միութիւնը չէ արտայայտում մի գաղափար, նա անխօրհուրդ է: Անխօրհուրդ են կոչում այդ բառերն այն գէպքում, երբ նոցա միութիւնը ոչ մի որոշում չէ արտայայտում: Այսպէս էլ բոլոր նշանները, յայտագրերը, ցուցակները, պիքերի պիտակները (յրլաւա) խորհուրդ ունին, եթէ ծառայում են մի որեիցէ նպատակի: Ոչ մի նպատակի չ'ծառայող նշաններն անխօրհուրդ կասուին. և անխօրհուրդ են այն նշաններն, որոնք անպէտք են որոշ նպատակի հասնելու, օրինակի համար, անխօրհուրդ են այն նշանագրերը, որոնք որոշում են իրերի կարգաւորումն, եթէ այդ նշանագրերի միջոցով անկարելի է գասաւորել իրերն ըստ իրանց տեղերի: Անմիտ է և աև գաղտնի նշաններով գրած նամակը, որն ամեն ոք կարող է կարդալ: Նոյնպէս ամեն մի միջոց, բնակարանի, մեքենայի իւրաքանչիւր մասը, նոյն իսկ ամբողջ մեքենան, ամբողջ շինութիւնը նշանակութիւն ունին միայն այն գէպքում, երբ նորա նախ որոշուած են մի որեէ գործի համար, ապա իսկապէս անհրաժեշտ են մի որեիցէ նպատակի համար: Այս պայմաններից մէկի բացակայութիւնն անպամ դարձնում է իրն անխօրհուրդ: Ուրեմն մի որեիցէ իրի խորհուրդը կայանում է նորա իսկական որոշման մէջ, այսինքն այն բանում, որ նա ծառայէր մի որեէ նպատակի կամ իսկապէս պիտանի լինէր որեէ մի նպատակի համարուն: Այսպէս է այս հարցի սկզբնական պատասխանը, թէ ինչնումն է կայանում մի որեիցէ իրի խորհրդի գաղափարը: Թէկ այս պատասխանը հաստատում է և հաստատել ես բազմաթիւ օրինակներով, այսուամենայնիւ դորա վերայ չէ կարելի կանգ առնել: Նա թէկ մօտ է ճշմարտութեան, բայց գեռ ճշմարտութիւնը ինքը չէ: Իսկ այդ գժուար չէ հաստատել բազմաթիւ օրինակներով, որոնք կախումն ունին նրանից որ այս պատասխանի մէջ ես աշքի առաջ ունէի մի շարտայայտուած միտք, որ աւելի կ'օժանդակէ լաւ օրինակների ընտրութեան զործին: Սակայն, որպէսպի թիւրիմացութիւններ տեղի չունենան, մենք կարտայայտենք այն ամենը, ինչ որ հասկանում ենք «խորհուրդ» բառից: Բանը նրանումն է, որ նոյն իսկ նպատակները կարող են զանա-

զան լինել և ոչ ամեն մի նպատակ մեր կողմից ընդունակ է համարում խորհուրդ տալ այն իրին, որը պէտք է լինի որպէս միջոց նպատակին համեմու։ Որպէս զի այն նպատակը, որի հասնելու համար որոշեալ իրը նշանակուած է և մինչև անդամ ծառայում է, ընդունակ լինէր այն իրին խորհուրդ վերաբրել, պէտք է որ ինքը նպատակը մեր աշքում քիչ թէ շատ յարգ ունենար, որպէս զի արժենար նրա յետեկոց ընկնել։ Եւ որքան աւելի արժէք ունենայ այդ նպատակը, այսինքն, որքան աւելի անհրաժեշտ լինի նորա յետեկոց ընկնելն, այնքան աւելի նշանակութիւն ունի այդ որոշեալ ու պիտանի իրը. օրինակի համար, իւրաքանչիւր անեկդոտ գործ է ածւում դասախոսութիւնների մէջ միշտ որևէ նպատակով և այդ լինում է անհրաժեշտ աշքի առաջ ունեցած նպատակի համար։ Բայց անեկդոտի յիշելը դասախոսութեան ժամանակ շատ կամ քիչ նշանակութիւն կունենայ, կամ բոլորովին չի ունենալ, նայելով թէ ուսուցապետը ինչ նպատակ է ունեցել աշքի առաջ։ Այդ պատմութիւնը կունենայ մեծ ու անհերքելի նշանակութիւն, այն գէսքրում, եթէ անեկդոտը լաւ ու ընտիր միջոց է դասախոսութեան գիտնական բովանդակութիւնը պարզաբանելու համար, նա քիչ նրաշնակութիւն կունենայ, կամ առանց նշանակութեան կանցնի եթէ ուսուցապետը ցանկանայ միմիայն ծիծաղցիւ լսողներին կամ նոցա վատթար ճաշակը փորձել. ըստ որում այն նպատակը, որ այստեղ ուսուցապետն աշքի առաջն ունի, բոլորովին աննշան է ու չարժէ նրանով հետաքրքրուել։

Այսպէս «իրի խորհուրդ» անուանեալ զավակարի վերջնական սահմանումը կը լինի հետեւալն. «իրի խորհուրդ» ասելով հասկանում ենք դրութեանց նշանակութիւնը և իւրաքան պիտանաւորութիւնը մի այնպիսի նպատակի իրագույնան համար, որին ձգուում ենք կամ պիտի ձգուենք դրուած որեւէ պատմառից. Այս է «խորհուրդ» բառի ընդհանուր նշանակութիւնը, երբ մենք գործ ենք գնուում այն որեիցէ իրի խմաստի նկատմամբ։ Այդ խմանալով գժուար չէ պարզաբանել, թէ ի՞նչ պէտք է աշքի առաջ ունենանք տրամաբանօրէն, երբ խոսում ենք կեանքի մասին, ըստ որում «կեանքի խորհուրդ» զավակարը կազմում է մասնաւոր հասկացողա-

թիւն «որեիցէ իրի նշանակութեան» ըմբռնման համար։ Հետևաբար, եթէ մի որիէ իրի խորհուրդը կայանում է նորա նշանակութեան և իսկական կարեուրաւթեան մէջ մի արժէք ունեցող նպատակ իրագործելու համար, ապա կեանքի խորհուրդ ասելովն էլ պէտք է հասկանանք, որպէս որոշումն և իսկական պիտանաւորութիւն կեանքի՝ մի արժանաւոր նպատակի համեմու. համար, այսինքն այնպիսի մի նպատակի, որին պէտք է կամ անհրաժեշտ է ձգտել։ Այժմ ժամաւովկ տեսնուում ենք, որ կեանքի նշանակութեան հարցը նոյնն է, ինչ որ կեանքի նպատակի հարցը։ Հարցնել՝ ինչնւմն է կայանում կեանքի խորհուրդը, կը նշանակութիւն է կեանքի արժանաւոր նպատակը. Եւ միենոյն ժամանակ հեշտ է համոզուել, թէ կեանքի խորհրդի մասին խօսելը թոյլատրելի է միայն այն գէպքում, երբ մենք աշքի առաջ ունենք այնպիսի մի նպատակ, որն անպայման արժանաւոր է։ Փոքր առաջ մենք տեսանք, որ իրի խորհուրդը կախումն ունի ոչ ամեն մի նպատակից, այլ միայն այնպիսի նպատակից, որին պէտք է հետեւնք։ Բայց ամեն մի նպատակ մենք համարում ենք անհրաժեշտ կամ այն պատճառով որ նա ինքը մի նրապատակ է և այն ժամանակ նա մեր աշքում լինում է անպայման արժանաւոր, և կամ որպէս միջոց անպայման արժէք ունեցող մի նպատակի։ Այս վերջն գէպքում նորա արժէքը լինում է միայն յարաբերական։ Յարաբերական արժէք ունեցող նպատակները արժէք ունին ոչ ինքն ըստ ինքեան այսինքն, արժանի են հենց իրանց էութեամբ, այլ միայն կախումն ունենալով այն անպայման արժէք ունեցող նպատակից, որին ժառանյում են նորա որպէս միջոց, այնպէս որ եթէ շըկայ մի անպայման արժէք ունեցող նպատակից չկայ և չի էլ կարող լինել յուրաքերական արժէքը ունեցող նպատակ։ Այսպէս կեանքի նշանակութիւնը վերջ ի վերջոյ կարող է կախումն ունենալ անպայման արժէքը ունեցող նպատակից։ Ուստի, երբ մենք հարցնում ենք կեանքի խորհրդի կամ նպատակի մասին, այն ժամանակ երկութիւն մէկը՝ կամ մենք գործ ենք ածում այդ խօսքերը, առանց հաշիւ տարու մեղ նոցա նշանակութեան կամ նպատակի մասին, կամ թէ կիսով չափ նախավճռում ենք այդ հարցի պատասխանը։ Մենք վաղորոք արդէն ասում ենք, որ կեանքի վերջնական նպատակը անպայ-

ման արժէք ունեցող պէտք է լինի ու ցանկանում ենք իմանալ մի բան ևս նրա մասին, օրինակի համար, ինչի մէջ է նա կայանում և թէ արդեօք գործով իրականութիւն է ստանում թէ ոչ: Այստեղից ստացում է «կեանքի խորհուրդ» գաղափարի հետևեալ սահմանումն: — Դա կայանում է նրանում, որ մեր կեանքն նշանակութիւն ու նենայ ու ծառայէ որպէս իսկական միջոց հասնելու անպայման արժանաւոր նպատակի, այսինք մի այնպիսի նպատակի, որին ձգտելը անհրաժեշտ համարուէր ինքն ըստ ինքեան, եւ ոչ որիշ նպատակների համար, որոնց ծառայէր նա որպէս միջոց:

Ուրեմն կեանքի խորհուրդը նոյնն է, ինչ որ նորա որոշումն, որն անհրաժեշտ է անպայման արժանաւոր նպատակին համնելու համար, որպէս զի կեանքը լինէր որպէս իսկական միջոց մի այդպիսի նպատակ իրագործելու համար: Սակայն կեանքի ու ամեն մի իրի համար, պէտք է աչքի առաջ ունենալ ընդհանուր տրամարանորէն անհրաժեշտ պայման: այն նպատակը, որ իրագործելի է դարձում իրը, գտնում է ոչ իրի մէջ, այլ իրից գուրս: Օրինակ, այն նպատակը, որ նշանակութիւն է տալիս մի որեկցէ գիտնական հետազոտութեան, չէ իսկապէս այդ հետազոտութիւնը, այլ գտնում է այն ճշմարտութիւնների մէջ, որ ծնունդ են առնում այդ հետազոտութիւնների միջոցաւ: Այն նպատակը, որի պատճառաւ մենք մի որեկ աշխատութիւն ենք անում, չէ պարունակուում այդ աշխատութեան մէջ, այլ դորանից գուրս, նորա հետևանքների մէջ: Նոյնպէս եթէ մեր մարմնի ամեն մի մասի - աչքի, ականջի գոյութիւնը նրանակութիւն ունի, ապա նա կախումն ունի այնպիսի մի նպատակից, որը պարունակուում է մարմնի ոչ այդ մասերի մէջ, այլ դոցանից գուրս: Աշքերի գոյութեան նշանակութիւնը կայանում է նորա մէջ, որ մենք կարողանանք տեսնել, այսինքն այնպիսի նպատակի իրականացման մէջ, որ գտնուում է աշքերից գուրս: Կատարեալ այնպէս էլ ամեն մի շինութիւն, մերենայի խրաքանչիւր մասը նշանակութիւն է ստանում մեր աշքում այնպիսի մի նպատակի իրականացման համար, որ գտնուում է շինութիւնից, մերենայի մասից գուրս: Հարիւրաւոր օրինակներ կարելի է բերել: Ի՞նչու համար

բերեն, կրկին օրինակներ, քանի որ այն միտքը որ հաստատում է բերած օրինակներով, արդէն ինքն լսու ինքեան պարզ է: Յաւական է միայն հասկանալ «մէջոց» բառի նշանակութիւնը: «Մէջոց» նշանակում է այն, որի օգնութեամբ մենք հասնում ենք մի այլ բանի, ինքն միջոցն է եւ այդ այլ բանը նորա վերաբերութեամբ կոչում է եւ նպատակ: Ուստի, եթէ իրաքանչիւր իր, ի թիւս նոցա և կեանքը, ծառայում է ու պիտի ծառայէ, որպէս միջոց մի որեկցէ նպատակի հասնելու, այսինքն եթէ նա նըշանակութիւն ունի, այն ժամանակ այդ նպատակը չէ պարունակուում նորա մէջ, այլ գտնուում է նորա բովանդակութիւնից գուրս:

Հետևաբար երկուսից մէկը, կամ մարդկային կեանքը ոչ մի խորհուրդ չունի, կամ այդ վերջինը կայանում է այն որոշման, այն խական անհրաժեշտութեան մէջ այնպիսի նպատակի իրագործման համար, որը գտնուում է մարդկային կեանքի սահմաններից գուրս: Այս եղբակացութիւնը կարելի է հերքել միայն այն ճանապարհով, երբ մարդ հշանակութիւն չըտայ մեր գործածած գաղափարների որոշման, գլխաւորապէս «խորհուրդ» գաղափարի: Խօսելով կեանքը խորհրդի մասին շըվերազրել կեանքին խորհուրդ, շըվերազրել կեանքին այն, ինչ որ տրամաբանորէն կապուած է այդ գաղափարի հետ: Բայց այդպիսի միջոցներով կարելի է մինչև անգամ հերքել նոյն խկ մատեմատիկայի տեսրեմաները, եթէ մենք այդպիսի տրամարանական սխաներ չանենք, մենք պիտի համաձայնուենք այդպիսի որոշման հետ. Եթէ կեանքն ունի մի որեւէ խորհուրդ, ապա այդ վերջինը կայանում է կեանքի այն որոշման ու անհրաժեշտութեան մէջ, այնպիսի մի նպատակ իրագործելու որը գտնուում է ամեն մի անհատի կեանքից դուրս. ես առում եմ, ամեն մի անհատի կեանքից դուրս, ըստ որում ես մինչև այժմ աչքի առաջ եմ ունեցել ոչ թէ այս կամ այն անհաւորութիւնը, այլ առ հասարակ մարդկային կեանքը: Ուստի ստացուած եղբակացութիւնս չէ վերաբերում առանձին անհատի կեանքի, այլ առանց բացառութեան բոլոր անհատների կեանքին: Ծիծապելի կըլինէր մտածել, թէ այս կամ այն անձանց կեանքի խորհուրդը նորա մէջ է կայանում, որ լինի որպէս միջոց միւսների կեանքի համար: Զէ որ շըկայ մի այնպիսի

պատճառ, որ կարողանար մարդկանց մէջ զանազանութիւնն զնել, որպէս զի մէկի կեանքի նպատակն անպայման զնահատելի լինէր, խոկ միւսների կեանքը լինէր որպէս միջոց այդ նպատակին հառնելու համար: Ուստի երկուսից մէկը, կամ մարդկային կեանքը բոլորվին խորհուրդ չունի, կամ նա կախումն ունի մի այնպիսի նպատակից, որը իրագործւում է մարդկային սեռի կեանքից դուրս: Այսպէս ուրիշն կեանքի խորհրդի մէջ հաւատի ընդունելութեան պայմաններից մէկը կամ աւելի պարզ ասած է տրամաբանական պայմանը պէտք է համարել անպայման արժէք ունեցող նպատակի գոյութեան հաւատը, որն իրականում է կեանքից դուրս. հաւատալ կեանքի խորհրդին տրամաբանօրէն թոյլատընի է միայն այն ոչպատճ, եթէ մենք հաւատում ենք, որ մեր կեանքն այն ուղին է, որ տանում է մեզ ոչպատճ այդ արժանաւոր նպատակը, որը գտնում է մեր կեանքից դուրս ու իրագործւում է կեանքի միջնորդութեամբ:

Եթէ մարդ չէ ուզում ընդունել մարդկային կեանքից դուրս մի այդպիսի նպատակի գոյութիւնը, նա պէտք է շրհաւատայ իւր կեանքի խորհուրդին, ըստ որում առաջինը կազմում է երկրորդի հետևանքը: Այդ եղակացութիւնը շատ պարզ է ու չարժէ դորա մասին երկար ու բարակ խօսել ու հիմնաւոր հաստատութեան ենթարկել, եթէ նա շրջտնէր ի թիւս այնպիսի ճշմարտութիւնների, որոնք այնպէս հիմնովին մոռացութեան են տրուած, որ շատերին ոչ թէ դա նոր է երեսում, այլ և օտարութիւն: Դորա պատճառն այն էր, որ մեզ մօտ փիլիտովայութեան վերայ մի առ ժամանակ սկսեցին արհամարհանքով նայել, շրջայելով նորա պարզութեան և հասարակ լինելուն, շատերն ամենայն կերպ պատրաստ են հերքել ու բերել զանազան հերքումներ: Նա անջափ հակասում է մեր մէջ վաթսունական թուականներից արդէն տարածուած և ընտելացած մեր մոքերի ծալքերին, և թերութիւնները հեռացնելու համար ես պէտք է դիտեմ այն հակածառութիւնները, որոնք կարող են հանդիսանալ կամ հանդիսանում են ընդգէմ մեր եղակացութեան: Ուստի ես ոչ թէ օգուտ կըքագեմ մեր նորընթաց գրականութիւնից, այլ և այն հակածառութիւններից, որ տեղի են ունեցել իմ զանազան անձանց զըլ-

խաւորապէս երիտասարդութեան հետ խօսակցութեան ժամանակ: Հերթումներից մէկն այն է, որ չի կարելի ընդունել կեանքի նպատակը կեանքից դուրս, ըստ որում բարոյական պահանջողութիւնը հակասում է այդ որոշման: Այդ հիմունքը պարզաբանուած է մի զբոյլի մէջ, որ լոյս է տեսել աշխանը 1895-ին, մի անձի հեղինակութիւնն, որը թէկ ոչ մասնագէտ փիլիտսփիւներին տարածուած են¹⁾: Նա ուրում է ի միջի այլոց աշքի առաջ անցկացնել ընդհանուր փիլիտսփայական հարցեր: Նա իւր միարը հետևեալ կերպով է պարզաբանուած: Եթէ կեանքի նպատակը ընդունենք կեանքից դուրս, այն ժամանակ այդ վերջնինը պէտք է ուրունել ուրիշ անհատների կեանքերի մէջ, կամ ընդունել, որ բոլոր մարդկային կեանքերի նրա պատակները գտնուած են այդ կեանքերից դուրս: Առաջինը հինց այն տեսակէտներից է անտեղի, որ ոչ մի տրամաբանական և բարոյական հիմունք չըկայ համարելու մի քանիսի կեանքը որպէս նպատակ, խոկ միւսներինը որպէս միջոց: Եթէ մարդկային բոլոր կեանքերի նպատակն այդ կեանքից դուրս լինէին, այն ժամանակ իւրաքանչիւր մարդկային կեանք պէտք է համարենք, որպէս միջոց այդ նպատակին համենելու. Բայց բառ առ բառ այսպէս է ասում մեր հեղինակը. «մարդկային «եսը» բողոքում է գէպինրան ունեցած այդպիսի մի յարաբերութեան դէմ»²⁾—«նորա մէջն է կայանում հեղինակի խօսքերով, իրի ու անձնաւորութեան զանազանութիւնը, որ առաջինը կարելի է գործադրել որպէս զէնք կամ միջոց կամ զոնէ, որը թոյլ չէ տալիս նորա մէջ տեսնել միայն զէնք կամ միջոց»³⁾: Ի չարկէ հեղինակը լաւ է արել, որ «միայն» բառի միջոցով իւր միտքն աւելի պարզեցնում է, ըստ որում նա ինքն էլ հարիանցի նկատել է, որ երբ խօսում են կեանքի նպատակի մասին, ուզում են իմանալ ոչ այն «թէ ի՞նչ նպատակներին մարդիկ իրենց կեանքի համար որոշում, որովհետեւ այդ նպատակները անթիւ ու անվերջ են իրանց տեսակներով, այլ ուզում են իմանալ՝ «թէ որոնց այդ նպա-

¹⁾ Мысли объ основахъ нравственности. Н. И. Карбъева С.-Пб. 1895.

²⁾ Երես 110.

³⁾ Սահմանադրութեան 17:

տակներից համապատասխանում են մարդկային իսկական որոշման»¹⁾: Եսկ եթէ կեանքի նպատակի հարցի վերլուծման ժամանակ աչքի առաջ ունինք մարդուս որոշումն, նշանակում է, որ մեր «եսը» այնքան էլ չէ բողոքում այդ բանի գէմ, որ մարդկային անձնաւորութիւնները պէտք է ընդունել որպէս զէնք կամ միջոց մարդկային իսկական որոշման համար: Ուստի և պէտք է կանխօրէն բացատրել, որ մեր բարոյականութիւնը արգելում է մեզ մարդկային անձնաւորութիւնը ընդունել որպէս միջոց, աւելի ևս «միայն» միջոց: Բարոյական պարտականութիւնը պատուիրում է մարդուս լինել որպէս միջոց կամ զէնք բարոյական պահանջողութիւններն իրագործելու համար, բայց միևնոյն ժամանակն արգելում է, ում որ լինի, հինգ Աստծուն էլ, ընդունել որպէս «միայն» միջոց: Ուրեմն ըստ բարոյական պարտականութիւնների անհատի անձնաւորութիւնն ոչ մի ժամանակ չէ կարող լինել միայն միջոց, այլ միշտ պէտք է լինի նոյնպէս և նպատակ: Հետևաբար բարոյական պարտականութիւնների չնորհիւ չէ կարելի ընդունել մարդկային կեանքերի ոչ մի նպատակ, որին չըմտնակցէին իրանք մարդիկ, որը չըմիանար մարդկային անձնաւորութիւնների շահերի հետ: Այստեղից հեղինակը դուրս է բերում, որ կեանքի նպատակը չէ կարելի կեանքից դուրս համարել, ըստ որում այն ժամանակ պէտք էր կեանքն ընդունել, որպէս միայն միջոց և նա գտնում է մարդկանց կեանքի սահմանի մէջ, ըստ որում այն ժամանակ միայն անձնաւորութեան շահերը կարող է միանալ կեանքի նպատակի հետ: Ապա միայն անձնաւորութիւնը կըդադարէ լինել «միայն միջոց», բայց և կըլինի նոյնպէս նպատակ: Այս եղբակացութիւնը հինգ սկզբից շատ զայթակղեցուցիչ է: Սակայն նա իսկոյն և եթ կորցնում է իւր հրապոյրը, եթէ մենք միայն ուշադրութիւն գարձնենք հետեւեալ հանգամանքի վերայ, այն եղբակացութիւնը, որ կեանքի նպատակը (եթէ նա միայն անի) գտնում է կեանքից դուրս, ստացուած է զաղափարների տրամաբանական կապի քննութիւնից: Նա յառաջացել է «կեանքի խորհուրդ» զաղափարի բովանդակութիւնից: Հերքելով այդ եղբակացութիւնը, մենք քննապատող հեղինակի հետ միասին դիմում ենք բարոյական պա-

¹⁾ Երես 10:

հանջողութիւններին, բայց չէ որ տրամաբանութիւնը ու գաղափարների տրամաբանական կապը միշտ միահաւասար ոյժ ունին: Թէ այդ և թէ այն գէպը ոմ այդ եղբակացութիւնները միևնոյն պարտաւորութիւններն են պահպանում: Եթէ մէկը մեզ անպայման ապացոյց էր, թէ երկու անգամ երկուսի չորս լինելը բոլորովին ոչ բարոյական հանգամանք է, որպանից այդ հաւասարութիւնը չէր կորցնիլ իւր տրամաբանական անհրաժեշտութիւնը և երկու անգամ երկուսի չէր դառնալ հինգ կամ մի ուրիշ թիւ: Հետևաբար, եթէ մեր եղբակացութեան և բարոյական պարտականութիւնների մէջ հակառակութիւն լինէր, որպանից չէր հետեւիլ, որ մենք պէտք է մի այնպիսի նպատակի հաւատանք, որ կեանքին միտք է տալիս, որը կիրագործուէր կեանքի մէջ: Ընդհակառակն այստեղից կըցառաջանայ այն եղբակացութիւնը, որ առ հասարակ չէ կարելի հաւատալ կեանքի խորհրդի գոյութիւնը, ըստ որում չի կարելի ընդունել մի այնպիսի նպատակ, որ կեանքին խորհրդի է տալիս, որովհետև հակառակում է տրամաբանական պահանջներին, իսկ ենթադրել այդ վեր շինը կեանքից դուրս անկարելի է ըստ բարոյական պահանջների: Գործերի այդ գրութիւնը չափազանց անմիտիթարական կըլինէր բայց նա բոլորովին անխուսափելի չէ, որովհետև նա սկզբ է առնում շապացուցուած զաղափարների նոյնացուցման՝ մի կողմից անձնական գոյութեան զաղափարի և միւս կողմից այն կեանքի զաղափարի միջոցով, որի մասին մինչև այժմ խօսել ենք: Մտարերենք, թէ ինչ բան էինք հաւականում «կեանք» բառի մասին խօսելու ժամանակ: Մեկ հաշվ տանիք թէ ինչ մարդկային կեանքի մասին ենք մինչև այժմ խօսել. ի հարկէ այն կեանքի մասին, որ ամեն մարդ աչքի առաջ ունի, երբ նա իրեն կեանքի խորհրդի հարցն է տալիս: Բայց երբ մենք ուզում ենք իմանալ, թէ ինչ է մարդկային կեանքի խորհրդորդը կամ թէ արդեօք նա զոյութիւն ունի, պարզ է, որ աչքի առաջ ունինք արդէն մեզ ծանօթ կեանքը, այն ներկայ կեանքը, որի մէջ գտնուում ենք, որովհետև անկարելի է հարցնել անծանօթ կեանքի խորհրդի մասին: Այդ խօսքերով մարդկային կեանքի խորհրդի մասին, «կեանք» բառի ներքոյ հասկանում ենք մարդուս երկրային զոյութիւնը, և մեր ստացած եղբակացութիւնը, եթէ

նորան աւելի որոշ արտայայտենք, ու մի բան գանցառութեան չը-
տալով կը լինի հետեւալը. «Այն նպատակը, որ որոշում է մար-
դուս գոյութիւնը երկրագնդի վերայ, գտնում է այդ գոյութեան
սահմաններից դուրս: Այժմ միայն հարցնենք մեզ. արդեօք հակա-
սում է մեր եղբակացութիւնը այն բարոյական պահանջներին, որով
ոչ մի անձնաւորութիւն չէ կարելի ընդունել որպէս միջոց կամ դէնք
որևէ նպատակի համար, ի հարկէ, հակասում է, եթէ մենք ընդու-
նենք երկրային գոյութեան գաղափարը առհասարակ անձնական
գոյութեան վախճանով բոլորով անհետանում է նաև մարդկային
անձնաւորութիւնը: Այն ժամանակ ի հարկէ գտնուելով երկրային
կեանքի նպատակը այդ կեանքից գուրս, կը դանուի ամեն մի անձ-
նաւորութիւնից գուրս, ուստի անձնաւորութիւնը կը սկսի խաղալ
միայն դէնքի կամ միջոցի դէր և կը կորցնի իւր ինքնուրոյն արժա-
նաւորութիւնը: Ահաւասիկ մի նոր հարց. ի՞նչ իրաւունքով մարդուս
երկրային գոյութիւնը ընդունեցինք առ հասարակ անձնական գոյու-
թեան տեղ, մարդուս երկրային կեանքը, որի խորհրդի մասին է
մեր խօսքը, առ հասարակ նորա կեանքի տեղ: Ի հարկէ զանազան
պատմական.—կուլտուրական պատճառներով մենք սովորել ենք մը-
տածել, որ երկրային գոյութեան վախճանով, գաղարում է և մարդ-
կային ամբողջ գոյութիւնը: Այդ սովորութեան արմատանալուն օժան-
դակել է նաև այն հանգամանքն, որ վախտունական թուականներում
իշխում էր մեր մէջ նիւթապաշտութիւնը (մատերիալիզմ), իսկ
հօթանասունական թուականներում կատարեալ արհամարտութիւն դէ-
պի փիլիսոփայութիւնը: Ինչպէս ասում է Կաւելինը¹⁾, այդ ժամա-
նակն էլ չըներքեցին վերոյիշեալ ուղղութիւնը, այլ երկուսից մէկը
կամ առանց մի որևէ պատճառի այդ բանը կատակի նիւթ էին
դարձնում, կամ լուսթեան էին տալիս, մի կողմ ձգելով որպէս մի
անպէտք իր: Ի՞նչ կայ զարմանալի այդպիսի մի հանգամանքներում,
եթէ մի քանի հայեացներ սովորական դառնալով նիւթական ուղ-
ղութեան իշխանութեամ ժամանակ, ըստ հին սովորութեան, երբեմն
այժմս էլ անդիտակցարք ընդունում են նոյն խոկ այնպիսի մար-
դիկ, որոնք բոլորովին հակասակ են նիւթապաշտութեան: Ի թիւ

¹⁾ Задачи психологии 1872.

այդ սովորական մորերի գտնուում է նաև երկրային և անձնական
գոյութեան, անհատի անձնական և առ հասարակ նորա կեանքի
գոյութեան նոյնացուցումն: Բայց եթէ մի որևէ միտք մեզ համար
կատարեալ սովորական է դարձել, այդ դեռ չի նշանակում, որ նա
խկապէս ճշմարիտ է: Խոկ գիտութեան քննադատական տեսութիւ-
նը հաստատում է, որ անձնական անմահութիւնը գտնուում է ի շարս
այնպիսի երեսյթների, որոնք անմատչելի են մեր գիտութեան և
պէտք է հաւատին թունել: Այդ տեսութեան խօսքերով չէ կարելի
գիտական հիմունքներով ապացուցել անմահութեան գոյութիւնը,
բայց և միենոյն ժամանակ չէ կարելի նոյն հիմունքներով հերքել,
այնպէս որ գոյանից ոչ մէկը չէ կարելի իմանալ, բայց միենոյն
ժամանակ երկուսին էլ կարելի է միայն հաւատալ: Այսու ամենայ-
նիւ թող մինչեւ անգամ այդ կէտում սխալուի քննադատական փիլի-
սոփայութիւնն, թող մինչեւ անգամ այդ հարցը ժամանակով գիտա-
կանորիէն վերլուծուի: Բայց այժմ նա գիտականօրէն չէ վերլուծուած,
ասկէ այժմ միայն հաւատում ենք թէ անմահութիւն գոյութիւն
ունի կամ չունի, բայց դեռ ոչինչ չգիտենք թէ ինչպէս է իրակա-
նապէս այդ հարցի խօսական լուծումն:

Խոկ եթէ այդպէս է, ի՞նչ իրաւունքով մենք վճռական կերպով
հաստատում ենք, որ կարծես թէ մենք խօսում ենք արդէն մի
ապացուցուած երեսյթի մասին. որ եթէ մարդկային կեանքին խոր-
հուրդ տուող նալատակը գտնուում է այդ կեանքից գուրս, այն ժա-
մանակ անձնականութիւնը զառնում է միայն միջոց և կորցնում է
իւր ինքնուրոյն արժողութիւնը: Պարզ է, քանի որ անմահութեան
հարցը գիտականօրէն դեռ չէ հաստատուած, իրաւունք չունինք խօ-
սելու մի այդպիսի վստահութեամբ: Դորա փոխարէն մենք պէտք է
ընդունենք հետեւեալ ոչ ստորագրական այլ պայմանական գրութիւ-
նը. եթէ մենք չենք հաւատում անմահութեան, ապա անկա-
րելի է հաւատալ կեանքի խորհրդին, որովհետեւ այն տրամաբա-
նական պահանջներն, որ յառաջանում են խորհրդուի գաղափարի բո-
վանդակութիւնից, ստիպում են մեզ ընդունել, որ կեանքին խոր-
հուրդ է տալիս կեանքից գուրս: Խոկ բարոյական պահանջները մեզ
արգելում ենք ընդունել, թէ անձնականութիւնը ինչպիսի ձեռքերի

մէջ էլ լինի, նոյն իսկ Աստուծոյ ձեռքում, որպէս միջոց։ Մինչդեռ
եթէ անմահութիւն չկայ, իսկ կեանքի նպատակը գտնում է կեան-
քից դուրս, այն ժամանակ անձնականութիւնը դառնում է միմիայն
միջոց կամ զէնք։ Իսկ եթէ ընդհակառակն մենք հաւատում ենք
կամ կամենում ենք հաւատալ կեանքի խորհրդին և միմնոյն ժամա-
նակը մենք չենք կամենում խանգարել ոչ տրամաբանական և ոչ
բարոյական պայմանները, այն ժամանակ մենք պարտաւոր ենք հա-
ւատալ և անմահութիւնը։ Ավելի խօսքերով. անձնական անմահու-
թեան հաւատալը կեանքի խորհրդին հաւատալու տրամաբա-
նական եւ բարսյական ընդունելութեան պայմաննն է։

Այսպէս է վերջնական եղբակացութիւնը որին պէտք է համնենք,
աշքի առաջ ունենալով գաղափարների տրամաբանական կապը։ Եւ
այդ եղբակացութիւնը կրպահպանէ իւր նշանակութիւնը նոյն իսկ
այն դէմքում, եթէ մի որիէ անհատ անժխտելի կերպիւ ապացոյց
է անձնական անմահութեան անկարելիութիւնը, որովհետեւ այն
տրամաբանական կապը, որ գոյութիւն ունի գաղափարների մէջ,
չէ ընդհատում, եթէ մինչև անզամ ոչ մի տեղ չկան իրեր, որոնք
համապատասխան են այդ գաղափարներին։ Ըրջանի կապն իւր յատ-
կութիւնների հետ չէ ընդհատուիլ, եթէ նոյն իսկ անհետանան բո-
լոր կլսր իրերը։ Հետևաբար, եթէ մէկն ապացոյց էր, որ չկայ ան-
մահութիւն, այն ժամանակ նա իւր ապացուցելով բոլորովին չէր
հերքիլ մեր եղբակացութիւնը, այլ նա կապացուցէր միայն այն, որ
մենք պէտք է հրաժարուենք կեանքի խորհրդին հաւատալու և ոչ
թէ այն, թէ այդ հաւատը տրամաբանօրէն թոյլատրելի է և ան-
մահութեան առանց հաւատալու։ Եւ ինչպէս տեսնում ենք, մեր
մերջնական եղբակացութիւնը ստացում է շատ պարզ և հասարակ
գատողութիւնների միջոցաւ։ Որպէս զի համնենք այդ գաղափարին,
հարկաւոր է միայն «նշանակութիւն» միտքը վերլուծել, և չմոռա-
նալ այն, որ յանուն բարոյական պահանջումների անձնաւորութիւ-
նը չպէտք է լինի ոչ որի ձեռքին, անզամ Աստուծոյ ձեռքին, մի-
միայն միջոց կամ զէնք։ Բայց մինչև անզամ այդ գատողութիւնների
պարզութիւնը, որ մեզ հասցրել է այս եղբակացութեան, նրբեմն
մեր մէջ կասկած է հարուցանում և ստիպում է նրան հերքելու

փորձեր անել։ Ահա թէ ինչ աստիճան արմատացել է մեր մէջ ան-
հետեւզական նիւթապաշտութիւնը։ Մենք կուգէինք բացասել ան-
մահութիւնը և միննոյն ժամանակ ընդունել, որ կեանքը նշանա-
կութիւն ու արժէք ունեցող երեսյթ է։ Գոնէ այս պարզութեան
առթիւ ինձ պատահել է լսել հետեւեալ ընդիմաբանութիւնը։ Կեան-
քի նպատակը ուրախութեամբ ընդունում են շատերը, գոնէ ամբողջ
երիտասարդութիւնը։ Որովհետեւ այդ վերջինն այնպէս իդէալական և
միմնոյն ժամանակ վճռողական է, յանդուփն և հետեւղն է իւր վար-
ուունքների մէջ, որ հազիւ ասլէր, եթէ կորցնէր կեանքը նշանակու-
թեան հաւատը։ Իսկ միւս կողմից ովէ այնքան քիչ տրամապրուած
հաւատալու անմահութեանը, ինչպէս երիտասարդութիւնը։ Այդ ոչ
թէ մի ժամանակաւոր և մի տեղական երեսյթ է։ այլ կատարեալ
ընական մի բան է, որովհետեւ մի կողմից քանի որ գեռ մարդ երի-
տասարդ է և ուժեղ, նա, ի հարկէ, տրամադրուած չէ մտածել այն
բանի մասին, թէ ինչ կըլինի մահից յետոյ, նա բոլորովին մոռա-
նում է այդ բանը, իսկ միւս կողմից, նա գեռ փորձուած չէ մտա-
ծողութեան մէջ, վայելելով իւր բոլոր էութեամբ կեանքը—ակամայ
տրամադրուած է մտածել, որ այս կեանքով վերջանում է ամբողջ
իրականութիւնը։ Այսպիսի տրամադրութիւնն աւելի հեշտ է նկատել
երեխանների մէջ, նորա ինչ որ իրանց ընտանիքում տեսնում են,
կարծում են թէ ամեն տեղ էլ այդ պատահում է¹⁾, եթէ այդպէս
հեշտ է դիտել կեանքի նպատակի և անմահութեան հաւատի կապն,
ապա ինչպէս է որ այն անձնաւորութիւնը, որ չէ հաւատում ան-
մահութեանը, կարող է հաւատալ կեանքի նպատակին, մինչև ան-
գամ խօսել նորա մասին առանց զգալու, որ նա իւր մարերամ չունի

¹⁾ Ահա իրական կեանքից վերցրած երկու տարօրինակ. Պատճեր։ Մի հինգ կամ վեց տարեկան երեխայի մօրաքոյը ցոյց է առ վեր նորամբն որդին։ Փոքրիկ մանուկը տեսնելով նորամբն երեխային ու դիտելով սե-
ննեակն հարցնում է «ապա ո՞ւր է միւս երեխան»։ Ինչպէս առ վերջէ այդ
մանուկը թէ իւր և թէ ուրիշ ընտանիքներում կամ բոլորովին ուրիշներ
չէ տեսնել, կամ եթէ տեսել է երկուսն է եղել։ Մի ուրիշ օրինակ. Պատ-
ճառապէս այն հասակի աղջիկ նկատել է, որ երեք խոհաբարուհիներն, որոնք
իրանց տանը զանազան ժամանակներում ծառայել են, ամուսնացել վերջ ի
վերջոյ այդ երեսյթն առիթ է տալիս աղջկան հարցնել իւր մօրը. «գու և
խոհաբարուհի էլլը, երբ մարդու գնացիր»։

ոչ մի հետեղականութիւն, թող նա անփորձ լինի մտածողութեան մէջ և չհասկանայ թէ ինչումն է կայանում իւր սխան, բայց և այնպէս նա պէտք է զգայ այդ վերջինը, որպէս մի հակասութիւն իւր մտքերի մէջ: 2է որ անկասկածելի է որ բոլոր տրամաբանական սխաները նախ զգում ենք և ապա յետոյ ենք սկսում որոնել այդ սխալը և վերջը գտնում ենք թէ ինչ բանի մէջ է կայանում այդ սխալը: Եւ այդ զգացումը աւելի արագ և ուժեղ է լնդանում, քանի աւելի պարզ են այդ դատողութիւններն, որոնց օգնութեամբ այդ սխաներն ուղղում են: Ինչպէս ուրեմն սլիտի բացատրել այն հոգեբանական հանելուկը, որ շատ մարդիկ չեն հաւատում անմահութեանը և մինոյն ժամանակ ընդունում են կեանքի նպատակ, չը զգալով այդ գէպքում իրանց տրամաբանական սխալը:

Որպէս պատասխան այդ թիւրիմացութեան ես կը հիմնուիմ երկու հոգեբանական փաստերի վերայ, որոնք այդ սխալունքը զգալու արգելման պատճառ են կազմում: Առաջին փաստը կայանում է նորա մէջ, որ մենք միշտ ձգտում ենք ամեն ինչ դատել այնպէս, ինչպէս իրերն մեզ ներկայանում են կամ մեր երևակայութեան նիւթը դառնում, այսինքն այն ձեզ, որով մենք չնորհիւ մեր խոհականութեան կազմութեան ներկայացնում ենք մեզ կամ իրերն ենք երևակայում, ձգտում ենք ընդունել իրերի գոյութեան ձեփ տեղ: Այսպէս եթէ հարցնենք մէկին ինչո՞ւ չէ ընդունում այնպիսի իրեր, որոնք կարող էին գոյութիւն ունենալ առանց տարածութեան, ըստ որում առանց տարածութեան, որը ունի երեք շափումն երկարութիւն, բարձրութիւն և լայնութիւն, նա անշուշտ մեզ կը պատասխանէ. մենք մեզ չենք կարող ներկայացնել կամ երևակայել ոչ մի իր տարածութիւնից գուրս, այն էլ եռաշափ տարածութիւնից: Այդպիսով մեր խոհականութեանը իրեր ներկայացնելու անհրաժեշտ ձեզ համարում ենք նաև ոչ թէ միայն մտապատկերների, այլ և իրերի գոյութեան անհրաժեշտ ձեզ: Նոյն իսկ այն գէպքում, երբ մենք մի որիէ պատճառաւ հաստատ վճռել ենք մի որիիցէ իրին չ'վերագրել այն, ինչ արդինք է այն ձեփ, որով մենք ներկայացնում ե երևակայում ենք այդ իրը, այսու ամենայնիւ շատ սակաւ է պատահում մեր այն վճիռն ի կատար ածել: Այսպէս օրինակ, երբ խօսում են

Աստծուծոյ, հոգւոյ և այլ բաների մասին, հշտութեամբ համաձայն-ւում են որ այդ բաներին չպէտք է վերագրել ոչ մի տարածական յատկութիւն, որ յատուկ է միայն տարածութիւն ունեցող իրերին, որովհետեւ առաջինների ներքոյ մենք հասկանում ենք մի ինչ որ մաքուր հոգեսր բան, որը խորթ է որևէ տարածականութիւնից: Բայց շատ քշերին է յաջուղում այդ բաների մասին խօսելիս գերծ մնալ այն մտապատկերից, որը ակամայ նկատում է նրա երևակայութեան մէջ: Այն է հոգին մենք երևակայում ենք մեզ փոքր մարդու կերպարանքով. մենք ուրախութեամբ ենք համաձայնում այն բանի հետ որ հոգուն չէ կարելի վերագրել տարածութեան ոչ մի յատկութիւն, բայց այնու ամենայնիւ հակումն ունենք նորան մարմնի մէջ մի որոշ տեղ տալ, այնպէս որ եթէ կտրենք մարմնի այդ կը տորը, մինոյն ժամանակ հոգին կը կտրենք մարմնից: Ահա հէնց այդ քուրոր փաստերն ապացուցում են որ մեր խոհականութիւնը ուժեղ ձգտում ունի խորհել իրերի մասին, հարմարուելով դադունի կերպով ոչ այն բանի հետ, որը կարելի է մտածել այդ իրերի մասին, այլ հարմարուելով այն բանի հետ, ինչպէս նրանց ներկայացնում ենք մենք:

Երկրորդ փաստը, որ վերոյիշեալի հետ միասին հնարաւորութիւն է տալիս վճռել մեր հոգեբանական հանելուկը, կարելի է անուանել իւր սեփական կատարել մահի մտապատկերի անհնարին լինելը: Դա կայանում է նորա մէջ, որը չնայելով մեր բոլոր ջանքերին մենք անկարող ենք երևակայել մեր հոգեկան գոյութիւնը, այսինքն մեր հոգեսր անձի գոյութիւնը, մեր «ես»-ի գոյութիւնը վերջացած: Փորձենք մեզ մեռած երեսկայել: Ի հարկէ մեզնից իւրաքանչւորը կարող է իրան երևակայել իրին մի անշարժ սառած դիակ, որ այդ դիակի վերայ մի քանիսը լալիս են և սրտանց ողբում են, մի քանիսը միայն տիրապէմ կանգնած են, մի քանիսը ծածուկ խօսում բամբասում են, մի քանիսը կատարում են թագման ծիսակատարութիւնը եալին: Այս բոլորը հեշտ է երևակայել: Բայց մի այնպիսի պատկեր երևակայելով ես մինոյն ժամանակ ակամայ ինձ ներկայացնում եմ, թէ ես ինչպէս մի գաղտնի անկիւնից այս բոլորը դիտում եմ: Հետեղար ես ինձ ներկայացնում եմ իմ մարմ-

նական և ոչ իմ ամբողջ մահը: 2է որ իմ հոգեկան կողմը իմ «ես»-ը ներկայանում է ինձ զեռ կենդանի: Յաճախ մինչև անգամ այնպէս է լինում, որ երբ այդ պատկերը ներկայացնում են, այն ժամանակ ակամայ և երևակայում են: թէ ինչպէս կըցանկային մի քանիսին միխթարել և քաջալերել, միւսներին նախատել որեէ բանի մէջ, որ մենք այնպէս, ինչպէս սաստիկ նեղսրտութեան ժամանակ անկարող ենք մի խօսք անգամ արտասանել կամ մի որեէ շարժողութիւն դործել: Բայց և ինչպէս էլ որ լինի, այդ պատկերը երևակայելով, միենոյն ժամանակ մենք մեզ երևակայում ենք գաղտնի դիտող այդ ամենը: Այլ կերպ չէ կարելի, երբ մենք մեզ մի բան ենք ներկայացնում, այդ բանը ներկայացնում ենք այնպէս կարծես թէ նորան մենք ըմբռնել ենք: Օր. համար, երբ ես ներկայացնում եմ հիւրանոց, ես ներկայացնում եմ այդ վերջինն այնպէս, ինչպէս ես տեսել եմ: Ուրիշ խօսքերով. մեր մտապատկերներից անբաժան է անձնաւորութեան մտապատկերը: Այդ է պատճառն, որ մեր երազներում, միշտ մենք մասնակցող ենք լինում այն բանին, ինչ որ երազում տեսնում ենք: չէնց այդ հիման վերայ, ներկայացնելով ինձ մեռած ըստ մեր հոգեկան կեանքի օրէնքներին, ստիլուած եմ լինում ինձ երեակայել որպէս իմ մահը դիտող: Այդ նշանակում է, թէ ես ինձ կարծում եմ մեռած, բայց չեմ կարծում բոլորովին անհիտացած, ոչնչացած: Մարդ ինքն իրան խր «ես»-ը չէ կարող բոլորովին անհիտացած, ոչնչացած ներկայացնել: ։ ամենատելով մեր սեփական մահի, այսինք մեր եսի մահի ներկայացման անկարելիութեան փաստը մեր իրերի մասին դատման հետ (յարմարելով ոչ այն բանի հետ թէ ինչպէս է հարկաւոր մտածել, այլ այն բանի հետ, թէ ինչպէս նորա ակամայ նկարում են մեր երևակայութեան մէջ, այն ժամանակ բոլորովին պարզ կըլինի, որ այդ բոլորը միասին պէտք է խանգարէ մեզ զգալ կեանքի նպատակը առանց անձնական անմահութեան: 2է որ չընդունելով անմահութիւնը միայն խոհականութեան վերայ հիմնուելով, մենք չնայած դորան, մեր ամբողջ էութեամբ կըլիրաբերութինք կեանքի նպատակի հարցին ոչ այնպէս, ինչպէս պահանջում է խոհականութիւնը, այլ որպէս պահանջում են այն պատկերները, որոնք ակամայ նկարում են մեր

երեակայութեամբ: Խոկ այդ վերջինին անմատչելի է մեր կատարեալ մահի մտապատկերը: Ուստի առանց խոհականութեան առանձին ջանքերին, մենք ոչ մի ժամանակ չենք զգալ անմահութեան բացակայութեան տրամաբանական բոլոր հատեանկըները:

Բայց ի հարկէ միայն սոքա չեն մեր եզրակացութեան հերքելու փորձերը: Ով մէկ անգամ թողել է խոր սովորութիւնը հաւատալ անմահութիւնը, պարզ բան է նա ձգտում է գտնել կեանքի նպատակը, որը նշանակութիւն է տալիս կեանքին, երկրային գոյութեան սահմաններից ոչ դուրս: Ի հարկէ ամենալաւ պատասխանը բոլոր այդ փորձերի կարող է լինել մեր «նշանակութիւն» գաղափարի վերլուծումն: Բայց այն եզրակացութիւնը, որ ստանում ենք այդ զաղափարը վերլուծելով աւելի համոզիչ ու չօշափիկի է զառնում, երբ մենք քննենք այն փորձելն, որնցով ուզում են կեանքի նպատակը գտնել ոչ այնտեղ, ուր ցոյց է տալիս զաղափարների տրամաբանական կապը: Ուստի ձգենք մի հայեացը այդ վերջինների վերայ:

Զատ անգամ տառում են. ինչո՞ւ որոնել կեանքի նպատակը կեանքից գուրս, քանի որ իմ կեանքի նպատակը միմիայն ինձնից է կախուած: 2է որ ես եմ որոշում իմ գործունէութեան նպատակը: Ի հարկէ ոչ բոլոր նպատակները, որոնք կախումն ունին իմ կամքից. այնպիսիք են, որ նոքա իմ կեանքին նշանակութիւն տային: Ես կարող եմ իմ կեանքին այնպիսի մի բարձր նպատակ գնել, որ նա իմ ամբողջ կեանքին նշանակութիւն կըտայ և այն ժամանակ կեանքի ամբողջ նշանակութիւնը կըպարունակուի կեանքի մէջ և ոչ նորա սահմաններից գուրս: Բայց հարցնենք ինչպիսի նպատակ գրնեմ իմ կեանքին, որ նա նշանակութիւն ունենար: Ի հարկէ, այն նպատակը, որ որոնում ենք, պէտք է անպայման արժէք ունեցող լինի, խոկ այդ վերջինից կախումն ունեցող գործունէութիւնը, որն ինձ տանելը զէպի այն նպատակը, պէտք է լինի իմ աշքում անպայման պարտաւորական: Բայց միայն մի գործունէութիւն կայ, որն անպայման պարտաւորականութիւն է պարունակում խոր մէջ: Այդ այն գործունէութիւնն է, որ վերապրում ենք բարոյական պարտականութեան: Խոկ ամեն մի ուրիշ գործունէութիւն սնի միայն յարաբերական անհրաժեշտութիւնը, որի մի-

զոցով ևս կարող եմ որոշ վայելչութիւններ և հարմարութիւններ ձեռք բերել, ինձ համար պարտաւորեցուցիչ է միայն այն դէպրում, եթէ գնահատում եմ կամ մի ինչ պատճառով ևս պարտաւոր եմ գնահատել այդ վայելչութիւններն և յարմարութիւնները: Իսկ այն գործունէութիւնը, որը պատուիրում է մեզ բարոյական պարտականութիւնը, անպայման պարտաւորեցուցիչ է ինքն ըստ ինքեան, բոլոր անկախ վայելչութիւններից և յարմարութիւններից: Նա չէ կորցնում իւր պարտաւորեցուցիչ բնաւորութիւնը նոյն իսկ այն դէպրում, եթէ նա իմ մէջ միայն վիշտ յառաջացնէր: Հետեարար, եթէ ընդունենք կեանքի խորհուրդը կեանքի մէջ եւ ոչ կեանքից դուրս, այն ժամանակ պէտք էր ընդունել միայն կեանքի այն նպատակի իրականացուցումն, ուր գործունէութեան նպատակը կազմէր, որ մեզ պատուիրել է բարոյական պարտականութիւնը: Ուրիշ խօսքերով եթէ կարելի է որոնել կեանքի խորհուրդը հէնց կեանքի մէջ, այն ժամանակ ոչ այլ կերպ, քան նպատակի կատարման մէջ, որ ցոյց են տալիս բարոյական օրէնքի պահանջողութիւնները¹⁾:

Փորձենք ընդունել, որ կեանքի նշանակութիւնը ամբողջովին գտնուում է և ծառայում է այն որոշման իրավործման, որ պատուիրում է բարոյական օրէնքը: Ահաւասիկ մի նոր հարց, արդեօք ինքը բարոյական օրէնքը չէր գառնար մի մեծ անմտութիւն, եթէ չկայ անձնական անմահութիւն: Իրօք, եթէ բարոյական օրէնքն ինքն է պատուիրում և յետերդ է լինում մի որոշ նպատակի և եթէ այդ վերջինը այնպէս անիրազործելի, նա ոչ մի նշանակութիւն չունի և նա չէ կարող մեր կեանքին նշանակութիւն տալ, որովհետեւ, ինչպէս

¹⁾ Յաճախ երիտասարդութիւնը որոնում է կեանքի նպատակը յառաջադիմութեան մէջ (պրօքրես): Յառաջադիմութիւնը իսկապէս գնահատելի բան է. Բայց ինչո՞ւ: Միայն նորա համար, որ նախազրւում է բարոյական օրէնքից: Եթէ այն ինչ որ յառաջադիմութիւն ենք անուանում հակուէր բարոյական պահանչներին, մենք այդ վերջինը չէինք գնահատել, որպէս յառաջադիմութիւն: Այսպէս պէտք է կեանքի նշանակութիւնը ծառաէ յառաջադիմութեան այն շափով և այն պայմաններիներոյ, որքան ծառայում է բարոյականութեան օրէնքներին: Ուստի մենք կարող ենք բարականանալ միայն բարոյական օրէնքին ծառայող փորձի հետազոտութեամբ խորհրդար դարձնել մեր կեանքը:

որ մենք համաձայնուեցինք, ամեն մի իրի նշանակութիւնը կայանում է ոչ թէ նորա մէջ, որ նա մի նպատակի համար որոշուած լինի, այլ և նորա մէջ, որ նա իսկապէս պիտանի լինի այդ նպատակին համնելու համար: Դոնէ վերոյիշեալ գրքի հեղինակը ինքը բոլորվին համաձայն է, որ անմիտ է մի այնպիսի բան կեանքի նպատակ դընել, որ անիրավործելի է. կարող եմ արդեօք. ասում է նա, ամբողջովին հաւատալ այդ նպատակին երբ ես գլուհմ, որ յաջողութիւն չեմ ունենալու այդ նպատակին ձգտման մէջ¹⁾: Բայց ինչպիսի նպատակ է թելագրում մեղ բարոյական օրէնքը, ամեն մարդ անպայման կըհամոզուի, եթէ այդ վերջինը թելայրում է մի որոշ նպատակ. դա կըինի բոլոր մախիկանց բաղտաւորութիւնը, բայց արդեօք դա իրավործելի թէ անիրավործելի նպատակ է: Հազարաւոր օրինակներ և հողերանական խորհրդածութիւններ կարելի էր մէջ բերել, որ ապացուցէին նպատակի կատարեալ անիրավործելի լինելը, եթէ ենթագրէինք, որ մարդկային կեանքը սահմանափակուած է միայն երկրային գոյութեամբ: Բայց կարճ կտրելու համար այլ միջոցի գիմնեկը. մենք յիշենք կեանքի գնահատութիւնները, որ զանազան ժամանակներում արտայատել են բանաստեղծները, կրօնական գիտակցութիւնը, փիլիսոփաները: Ամեն երեելի բանաստեղծները սկսած Սոլոմոնից եթէ նորա երգով չեն վառաբանել կեանքի առանձին բովեները, այլ մտածել են ամբողջ կեանքի գնահատութեան վրայ, միշտ յայտնել են այն համազմունքը որ երկրային բաղդատութիւնը անիրավործելի և ունայն է: Աւելի զարգացած կրօնները—ըրիստոնէութիւնը ու բուդականութիւնը՝ երկուան էլ նայում են կեանքի վերայ որպէս արտասուած հովիւր: Այս կէտում թէ բուդականութիւնը ու թէ քրիստոնէութիւնը բոլորվին նման են իրենց հայեցողութիւններով: Այդ երկուսի մէջ տեղի ունեցող զանազանութիւնը սորա մէջը չէ, այլ այն բանի մէջ, որ քրիստոնէութիւնը չընայելով իւր երկրային կեանքի գնահատութեան, այսու ամենայնիւ չէ կորցնում իւր հաւատն գէպի կեանքի նպատակը և բարոյական օրէնքի գերիշտումն, ուստի և նա հաւատում է անձնական անմա-

¹⁾ Ս. 46:

հութեանը: Այս բոլորի միջոցաւ նա երևան է գալիս որպէս ուրախ կեանքի հաւատ և ոչ ատող, այլ կեանքը սիրող, քարոզող, որ հինգ առաջին ապացոյցն ինքը Փրկիչն էր իւր այցելութեամբ այն տօնին, որ տանը էր դէպի կեանքի բազմացնելը և մատակարարութեամբ հրաշալի գինու, որպէս զի շրնդհատուէր նոցա ուրախութիւնը: Ահաւասիկ քրիստոնէութիւնը հանդիսանում է հակառակ բուգայականութեան, որպէս ճշմարիտ յայտնութեան մարդկային երանութեան, նա սովորեցնում է մեզ շատել այն քիչ ուրախութիւնները, որ տալիս է մեզ երկրային կեանքը, թէ ընդհանրապէս գտնելով որ այդ կեանքը իսկական երանութեան համար ոչ լաւագոյնն է, խոստանում է այդ երանութիւնը տալ երկրային կեանքի սահմաններից դուրս. Մի խօսքով, այն ժամանակ բուգայականութիւնը ընկնում է միակողմանի պեսիմիստականութեան մէջ, քրիստոնէութիւնը շատ յաջող է վերլուծում պեսիմիստականութիւնը և օպտիմականութիւնը, իսկ երկրային կեանքի ընդհանուր գնահատութեան մէջ, առանձին վերցրած, երկուսն էլ համաձայն են իրար հետ: Նոյնպէս էլ փիլիսոփաները համարում են բաղդը երկրագնդի վերայ անիրազործելի: Ես չեմ խօսիլ այնպիսի պեսիմիստների մասին, ինչպէս Շոպենհաուերին է: Ես ի հարկէ չեմ թուիլ մի առ մի միւսներին կարգով սկսելով Պիտոնից, որն արհամարհանքով է վերաբերում դէպի երկրային կեանքը և որը համարում էր մարդկային մարմինը որպէս բանտ հոգու համար, որտեղից նա պէտք է փախուստով իւր ազատութիւնը դրսնի, որպէս զի կանգնի իսկական կեանքի ուզիղ շաւզի վերայ: Այս բոլոր բաները շատ թէ քիչ յայտնի են, բայց անկարելի է մոռացութեան տալ յայտնի Մելլի կարծիքը, որն ուզում էր գուրս բերել ու բացատրել բարոյական օրէնքի բոլոր պահանջները, որպէս պայմաններ, որոնք անհրաժեշտ են բազմին համեմելու համար, այն էլ երկրային բազտի, այնպէս որ նորանից աւելի շուտ կարելի էր սպասել համոզումն բաղդի հասնելու: Բայց նա ևս չկարպացաւ այն միտքն արտայայտել, որ բարտաւոր լինելու ամենահաստատ միջոցը կազմում է գիտակցական ընդունակութիւնը ապրելու¹⁾ առանց բաղդի: Նոյնպէս և ստոյիկեան և էպիկուրեան չկօլաների անդամներն ուզում

¹⁾ Ստոլիտարիզմъ 1882 երես 38:

էին սովորեցնել իրենց հետեւողներին այս երկրիս վերայ երանութեան հասնել: Բայց ինչ միջոց էին առաջարկում նորա: Զնայելով այն ճանապարհների տարբերութեան, որ պէտք է տանէր գէպի այդ միջոցը, թէ այստեղ և թէ այնտեղ իրենց էութեամբ միենոյնն էին: Թէ այնտեղ և թէ այստեղ նախ աշխատում էին սովորեցնել մարզուս շընկճուել կեանքի վշտերից և բացի այդ կարողանալ հարկաւոր դէպրում մինչև անգամ ապրել առանց որեէ ուրախութեան: Բայց եթէ նոցա կարծիքով, կարելի լինէր երկրիս վերայ հասնել ընդհանուր դրական բաղտին, այն ժամանակ հարկաւորութիւն չէր լինի վերոյիշեալ միջոցների մէջ, որպէս ձև և եղանակ երանութեան համնելու: Պարզ է, որ այդ երկու չկօլաները աշքի առաջ ունին միայն մի բան, ոչ թէ դրական բաղտի իրագործումն, այլ նոցա կարծիքով անխուսափելի անբաղտութեան նուազումն երկրիս վերայ: Միայն մի փիլիսոփայական չկօլա կար, որն առաջարկում էր երանութեան միակ միջոց - վայելչութիւնը: Այդ չկօլան հեղոնական կամ Կիրէականն էր: Բայց նա աստիճանաբար սկսեց ընկնել, անհետացաւ կորաւ էպիկուրեան դպրոցի մէջ և այդպիսով արտայայտեց իւր կատարեալ անինքնուրոյնութիւնը և այդ դպրոցի հետեւողներից մշակուեց Գեգելի կրոպական փիլիսոփայութեան պեսիմիստական ուղղութեան առաջին ներկայացուցիչը, որի պեսիմիստականութիւնը համնում էր մինչև անգամ ինքնասպանութեան քարոզին և այն էլ այնպիսի յաջող հետեւներ ունիցաւ, որ Աղէքսանդրիայում անհրաժեշտ գտան արգելել նորա դասախոսութիւնը, որովհետեւ այնտեղ շատերին իւր ուսմոնքով համոզեց ինքնասպանութեան դիմել: Ի՞նչ է ցոյց տալիս այդ պատմական փաստը: Այն, որ եթէ ընդունենք կեանքի արժէքն երկրային բաղտաւորութեան մէջ, մեր առաջ բացուող իսկական կեանքը կըտանի մեզ դէպի պէսիմիստականութիւնը և մինչև անգամ անձնասպանութիւնը: Ճշմարիտ է, որ կարող են ինձ ընդիմանալ չէ որ եղել են օպտիմիստ փիլիսոփաներ և այն էլ այնպիսի հանճարեղ ինչպէս Լայքնիցն է: Բայց իմ հակառակորդները շորոնեն նրա գաշնակցութիւնը. նա այնպիսի բարեկամներից կարող է լինել, որը թշնամուց աւելի վտանգաւոր է: Ի՞նչ է ուսուցանում Լայքնիցը: Այն, որ ներկայումն գոյութիւն ու-

նեցող աշխարհու լաւագոյնն է բոլոր կարերը աշխարհների մէջ, այսինքն, ինչպէս բացատրում է Լայքնիցը, այս աշխարհում այն-քան շատ անխուսափելի չարիքներ կան, որն անկարելի է ոչնչաց-նել. Բայց եթէ փորձենք նոյն նվթից, որից բաղկացած է մեր աշ-խարհը, մի ուրիշ աշխարհ չինել, այն ժամանակ նա աւելի վատ կըլինի մեր այժմեան աշխարհից, ուստի և ներկայ աշխարհը պէտք է համարել լաւագոյնը բոլոր կարելի աշխարհներից: Վերջապէս, նոյն հեղինակը, որի հետ յաճախ է ինձ պատահում վիճել այս աշխա-տովթեանս մէջ, որովհետեւ նա կեանքի միտքը կեանքի մէջ է որո-նում, մինչև անդամ ստիպուած է համաձայնուել, որ երկրային բազին իրականութիւն չստացող մի երեսյթ է. չէ կարելի հէնց այն հիման վերայ մարդկային ընդհանուր բաղտը մարդկային կեանքի բարոյա-կան նպատակ, ասում է նա, որ այդպիսի նպատակ է, որին ձգտե-լու ժամանակ մարդ անշուշտ անյաջողութեան կըհանդիպի¹⁾:

Այսպէս ուրեմն, եթէ բարոյական օրէնքը պատուիրում է ընդ-հանուր բաղտաւորութեան ծառայել, ապա նա անշուշտ մի այնտի-սի նպատակ է, որ անիրազործելի է երկրագնդիս վերայ: Այդ բա-նում բոլորեքեանք էլ ինձ հետ համաձայն են: Եթէ այն նպատակը, որ պատուիրում է մեզ բարոյական օրէնքը, իբր անիրազործելի է հանդիսանում երկրային զոյութեան սահմանների մէջ, ապա չէ նը-շանակում այդ, որ նա այնպիսի նպատակ է մեզ առաջարկում, որն անընդունակ է ոչ իրան և ոչ էլ մեր կեանքն որոշել, քանի որ անընդունակ է ոչ իրան և ոչ էլ մեր կեանքն որոշել, քանի որ անընդունակ է ոչ իրան և ոչ էլ մեր կեանքն որոշել, քանի որ այն իրը միայն նշանակութիւն ունի, որն իսկապէս որո-ցուած է և պիտանի է մի որեէ արմէր ունեցող նպատակի իրազոր-ծան համար: Եյն, դա այնքան պարզ է, որ նա անդամ չէ կարող հերքել, որ կեանքի նշանակութիւն հէնց կեանքի մէջ է գտնում: Ահաւասիկ ինչ է զրում վերոյիշեալ զրքի յարգելի հեղինակը. «ընդ-հանուր բաղտաւորութիւնը համարել, որպէս կեանքի բարոյական նպատակ անկարելի է միայն հէնց այն պատճառով, որ դա մի այն-պիսի նպատակ է, որին ձգտելով կարող ես անյաջողութիւն կրել: Կեանքի նպատակ որոնել մի որեիցէ բան, որին չէ կարելի հա-

նել, աւելացնում է նա, ի հարկէ անմտութիւն է. կարող եմ ար-դիօք հաւատալ այդ նպատակին, երբ գիտեմ, որ մեր ձգտման մէջ զէպի այդ նպատակը, ոչ մի չենք ցոյց տալու»: — «Ոչ, աւելացնում է նա, եթէ խելացի կերպիւ ընտրենք կեանքի նպատակը բազմա-թիւ կարելիներից, ընդհանրութեան պէտք է այնպիսինը միայն աշ-քի առաջ ունենանք, որն առ հասարակ իրազործելի լինէր երկրային կեանքի կարճատե ընթացքում»¹⁾:

Հետեաբար, եթէ բարոյական օրէնքը ծառայում է ընդհանուր բաղտաւորութեան, այն ժամանակ նա ինքն է անմիտ, ուստի և անկարող է մեր կեանքին միտք տալ: Եթէ չկայ անմահութիւն: Բայց տեսնենք թէ, ինչ պայմաններում նա կարող է կեանքին միտք տալ, այսինքն, ինչ պայմաններում ընդհանուր բաղտաւորութիւնը անի-րազործելի է: Դորա համար անհրաժեշտ է նախ, որ մարդկային բաղտը չպարունակէր իւր մէջ միայն այն, ինչ որ գտնուում է երկ-րային կեանքի սահմաններում, այլ մի ուրիշ բան ևս: Իսկ գորա համար հարկաւոր է, որ նոցա կեանքը շարունակուէր երկրային կեանքի սահմաններից գուրս էլ, այն էլ այնպէս որ վարձատրած են նորա այն բոլոր չարիքների փոխարէն, որ նորա անխուսափելի կերպիւ այստեղ արել են:

Ճտապում եմ, սակայն, պարզել. դա հարկաւոր է ոչ դրա հա-մար, որ իբր թէ միւս մարդկանց բաղտին ծառայութիւնս կըմնայ անմիտ. Եթէ նա հարիւրապատիկ վարձատրուած չինի հետագայ կեանքում: Ճատ անդամ կարծում են, որ իբր թէ փիլիսոփայութեան քննադատական, այն է կոնտական տեսութիւնը, անմահութեան մա-սին տանում է մեզ զէպի մի անմիտ ուսուցումն, իբր թէ ընդու-նելով անմահութիւնը յանուն բարոյականութեան նա վերջ ի վերջոյ իրականութեան մէջ միայն աշքի առաջ ոնի բաւական շահեր, ընդ-հակառակն, եթէ ես պահմանջում եմ անմահութիւն, որպէս պայման իմ կեանքի նպատակի կարելիութեան, ես չունիմ տրամաբանական իրաւունք հոգ աանել իմ անձի և օգուտների մասին: 2է որ որոնե-լով կեանքիս միտքը, զորանով ես որոնում եմ թէ ինչումն է կայա նում իմ լինելու նպատակը. հետեաբար իմ «եսը» արգէն վճռել է

¹⁾ ՍՎԸ. եր. 46:

¹⁾ ՍՎԸ. եր. 46:

ինձ վերայ նայել որպէս միջոց։ Ել ինչու համար խօսել եսական շահերի մասին։ Բայց երբ ես խօսում եմ այն պայմանների մասին, առանց որոնց միտք չունի բարոյական պարտականութեան պարտաւորութիւնը, այն ժամանակ անմահութիւնը և նորա հետ էլ վերցրած ժողութիւնը երկրային շարիքների նախ կարեռը չեն իմ վերաբերեալ այլ նոցա վերաբերեալ, որոնց նշանակուած եմ ես ծառայելու յանուն բարոյական օրէնքի։ Առանց այդ պայմանի իմ էութեան միտքը, որպէս իրականութիւն չստացող մի երեսյթ, անմիտ կըլինի։ Իմ խոհականութիւնը առանց այդ պայմանի ոչ մի նպատակ չի գտնիլ բարոյական օրէնքի կատարման մէջ։

Այլ կերպ կըլինի այն դէպքում, եթէ մենք ընդունենք անմահութիւնը։ Այդ ենթադրութեամբ մենք իրաւունք ունինք (չեմ ասում — մենք կըդիտենանք, այլ կարող ենք հաւատալ) հաւատալ, որ երկրային կեանքից դուքս է իրականութիւն ստանում այն ամենը, ինչ որ չէ իրականանում այս կեանքում, և միևնոյն ժամանակ դա անհրաժեշտ է բարոյականութեան պարտականութեան պարտաւորութեան միտքը պահպանելու համար։ Եթէ մի անզամ արդէն ընդունենք անմահութիւնը, ապա մեր աշքերին կարելի է դառնում հաւատալ, որ բարոյական պարտականութեան ի կատար ածեն ծառայում է որպէս անպարսաւելի միջոց անպայման արժէք ունեցող նպատակի համնելուն, որն իրազործում է մահից յետոյ և որ բարոյական գործունէութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ այն ուղին, որ տանում է դէպի այդ նպատակը, իսկ խիդն է ոչ այլ ինչ, եթէ ոչ այդ նպատակի արձագանքը մեր երկրային կեանքի մէջ։ Ուրիշ խօսքերով անմահութեան հաւատի հետ միասին բացում է և կարելիութիւն հաւատալ, որ բարոյական պարտականութեան իմ կատարումն, ժողութիւն է չնորում այն բոլոր շարիքներին, որ զործել եմ ոչ ես, այլ ուրիշները, որոնց բազտին ես պարտաւոր եմ ծառայելու որ այդ շարիքը կըփոխազրուի բարիքի (ոչ ինձ համար, այլ ուրիշների համար), որ այդ բարին կըհաշտեցնէ շարիքի հետ ոչ թէ միայն նրան, ով կրել է այդ շարիքները, այլ և այն բոլորին, ով ծառայելով բարոյական օրէնքին մղել է անհետեանք պատերազմ՝ աշխարհութիւնից ազատելու համար։ Ես ասում եմ «անհետե

անք», որովհետեւ եթէ այդ բոլորն ընդունենք, այն ժամանակ ընդհանուր բարտաւորութիւնը իրականութիւն կըստանայ, միայն ոչ պատեղ՝ երկրային կեանքում, այլ մահից յետոյ։ Հետեաբար, երբ կեանքի միտքը կայանում է բարոյական պարտականութեան ծառայութեան մէջ, իսկ այդ պարտականութեան ներքոյ հասկանում ենք, որպէս պարտաւորութիւն ծառայել ընդհանուր բազդին, այն ժամանակ կեանքի մտքի հաւատալ այսու ամենայնիւ տրամաբանորէն անընդունելի է հանդիսանում առանց անմահութեան հաւատի, ըստ որում ընդհանուր բազդը գառնում է անիրազործելի, եթէ չկայ անմահութիւն։ Այդ չէ նշանակում դեռ, որ ոչ ոք չէ կատարելու բարոյականութեան պահանջները, եթէ նա չէ հաւատում անմահութիւնը։ Մի՛տ կըդանուին մարդիկ, որոնք բաւական անհետեալական և ինքնասած են, որպէս զի այն անեն, որի մէջ չկայ ոչ մի միտք։ Ուստի հեշտութեամբ կարելի է գտնել այնպիսի մարդիկ, անմահութիւնը շհաւատալով պատու ամենայնիւ կաշխատեն կատարել բարոյական պահանջները։ Նորա այդպէս կարող են վարուել կամ ըստ հին սովորութեան կամ թէ այդ վարմունքն անձնապէս աւելի հածելի է թւում, ինչպէս շատերին հաճելի է միշտ հագնուիլ ըստ վերջին մոպայի։ Նաև աշքից չպէտք է թաղնել այն հանգամանքն, որ շատերին գեղեցիկ գեղարուեստական է երկում չհագուել իրենց վարմունքով բարոյական պահանջներին, ուստի նորա այնպէս էլ կըկատարեն, եթէ շտեմնեն էլ նոցա մէջ ոչ մի միտք — միայն վայելչութեան համար։ Բայց եթէ վերլուծենք «կեանքի խորհուրդ» գաղափարը և շմուանանք, որ այդ գաղափարի ներքոյ հասկանում ենք իսկական պիտանի լինելն արժէք ունեցող նպատակի համնելուն, մենք պէտք է համոզուենք, որ անմահութեան գաղափարի բացակայութեամբ կեանքի բարոյական պահանջներին ենթարկուելլ նոյնքան քիչ միտք է տալիս նորան, ինչպէս նորա ստորագրութիւնը մոպայի պահանջներին։ Չատ կարելի է, որ կեանքը, համապատասխանելով բարոյական օրէնքին, այս դէպքում նոյն իսկ կըհանգիսանայ աւելի գեղեցիկ, գեղարուեստական, բայց ոչ աւելի մեծ միտք ունեցող, բան անբարոյական կեանքը։

Սակայն ինձ կարող են այսպէս ընդդիմախօսել։ Ես այս բո-

պէիս նայեցի բարոյական պարտականութեան վերայ, որպէս պատուիրանքի վերայ, որը հրամանագրում է ծառայել ընդհանուր բաղդաւորութեան։ Գործի վերայ այսպիսի հայեցողութիւն ունինալով, կասեն ինձ, կեանքի մաքի հաւատը ճշմարիտ որ հանդիսանում տրամաբանօրէն անթոյլատրելի առանց անմահութեան հաւատի, նոյն խակ այն գէպքում ևս, երբ մենք ընդունում ենք կեանքի մորին, որպէս ի կատար ածումն բարոյականութեան։ Բայց կայ և մի այլ բացատրութիւն բարոյական օրէնքի, որ ցոյց է տուել մեզ կեանքը, որը մեզ բոլորովին չէ պարտաւորում ծառայել ընդհանուր բաղդին։ Այսաւասիկ, կարելի է այն գէպքում, եթէ մենք ընդունենք կանափ բացատրութիւնը, կարելի կըլինի ընդունել կեանքի միտքը, որպէս կատարումն բարոյական օրէնքի և այն էլ այնպէս, որ կարելի չի լինիլ հաւատալ անմահութիւնը. բայց ինքը Կանտը պարզեց, որ բարոյական օրէնքը կորցնում է իւր նշանակութիւնը, եթէ չկայ անմահութիւն, ես կարող եմ բաւականանալ հիմնուելով Կանտի վերայ։ Բայց այսու ամենայնիւ ի գէպս կարճարօտ կերպիւ արտայայտեմ նրա հայեցողութիւնը։

Ըստ Կանտի բարոյական օրէնքը զուտ ձեսկան օրէնք է. Իս չէ պատուիրում մեր գործունէութեան ոչ մի որոշ բովանդակութիւն, ոչ մի որոշ նպատակ, այլ միայն մեր գործունէութեան մի որոշ ձե։ «Պարտիր այնպէս, Կանտի կարծիքով, որ այն օրէնքը, որին ենթարկում է քո կամքը ամեն մի առանձին վերցրած գէպքում, կարողանար դառնալ ընդհանուր օրէնքը, այսինքն ունենալ ընդհանուր օրէնքի ձելը»։ Հետեարար այն հարցը քննելու համար, թէ այս վարմունքը պատկանում է արդեօք ի թիւս բարոյականի և անբարոյականի, պէտք է նախ նայել, կարող նա դառնալ ընութեան ընդհանուր օրէնքը։ Եթէ այդ կարելի բան է, այն ժամանակ նա դառնում է բարոյական վարմունք, հակառակ գէպքում—անբարոյական։ Օրինակի համար վերցնենք խարէբայութիւնը։ Եթէ մենք փորձէնք դարձնել այդ վերջինը ընդհանուր օրէնք, այն ժամանակ այդ խարէբայութիւնը կըլինէր մի անիրագործելի բան, ըստ որում իմանալով այդպիսի մի օրէնքի գոյութիւնը, ոչ որ էլ իրաք չէր հաւատալ։ Հետեարար խարէբայութիւնը պատկանում է անբարոյական վար-

մունքների թուին։ Այլ բան է փոխադարձ օվնութիւնը, ճշմարտասիրութիւնը։ Եթէ այդ վերջինները դարձնենք ընդհանուր օրէնք, նորա իրանք իրանց չեն ոչնչացնում, ինչպէս խարէբայութիւն։ Այսպէս ուրեմն բարոյական օրէնքը, Կանտի կարծիքով, չէ տալիս մեզ ոչ մի բան, բացի գործունէութեան որոշ ձեից և այդ ձեին ենթարկում են հարմար իրելն և հարմար բովանդակութիւնը։ Բացի այդ, իւրաքանչիւր վարմունք այն ժամանակ կարող է լինել բարոյական, երբ նա տեղի է ունենում բացառապէս յարգանքից գէպի բարոյական օրէնքը և ոչ այլ շարժառիթից գրգուած։ 2է որ այլ շարժառիթից գրգուած լինելով, իմ գործունէութեան նպատակն այլ ևս այն չի լինիլ ինչ որ պատուիրում է բարոյական օրէնքը, ոչ գործունէութեան խակ ձելը, այլ մի ուրիշ բան։ Այսպէս եթէ հիւանդին պահպանում եմ, նորա միտուց գրգուած, դա գեռ չէ նշանակում, որ ես բարոյակէս եմ վարւում։ Այդ վարմունքը բարոյական կըլինի միայն այն գէպքում, երբ ես պահպանում եմ հիւանդին անկախ իմ գէպի նրան ունեցած սիրուց, երբ ես պահպանում եմ նրան յարգելով բարոյական օրէնքը, եթէ ես մինչեւ անգամ ատէի. առաջին գէպքում աշքի առաջ ունեմ ոչ գործունէութեան ձևն, այլ ուրիշ նպատակներ։

Այսպէս է Կանտի հայեցողսւթիւնը։ Զխօսենք նորա մասին, թէ այդ տեսակետը որքան ուվիլ է, որովհետեւ դա մեզ համար բոլորին նշանակութիւն չունի։ Դորա փոխարէն տեսնենք թէ չէր կարելի մարդուս էութեան որոշումն համարել, որպէս բարոյականութեան այդ ձեսկան օրէնքի իրագործում։ Ինչու չէ. կարելի է։ Եթէ այդ որոշման մէջ չընդունենք անմահութիւնը, այն ժամանակ միտք չի ունենալ, որովհետեւ նա առանց անմահութեան նոյնան անիրագործելի է. որքան ընդհանուր բաղդառութիւնը. Իրօք, այդպիսի որոշումն հակառակ մարդում երկրային ընութեան, որովհետեւ անիրաբելի բան է, որ երկրային անհատի մէջ չընենք բազմաթիւ շարժառիթներից յառաջացած գործեր։ Այդ շարժառիթների մի մասը կըդրգէ նորան այնպիսի վարմունքների, որոնք հակառակ են բարոյական պարտականութեան, միւս մասն առիթ կըտայ այնպիսի վարմունքների, որոնք համապատասխանում են բարոյական

պարտականութեան, բայց նա կը կատարէ ոչ բարոյական օրէնքը յարգելով, այլ ուրիշ շարժառիթների ազդեցութեան ներքոյ (այսպէս նա կը կերակրուի քաղցի ազդեցութեան ներքոյ, այլ ոչ բարոյական պատճառներից դրդուած: Թէ այս և թէ այն դէպքում մեր ընդունած մարդուս որոշումն, որպէս իրագործումն բարոյականութեան զուտ ձևական օրէնքի—կը մնայ անիրագործելի: Իրօք շատ սակաւ է մարդ կատարում այն, ինչ բանի համար նա որոշուած է: Խոկ մնացեալ միւս դէպ երում նա հեռու կը լինի իւր որոշման կատարումից: Բայց որովհետեւ ընդունեցինք, որ չկայ անմահութիւն, ահա նորա կեանքի նշանակութիւնը կը մնայ միշտ անկատար: Ահաւասիկ այս մտքերը ստիպեցին նոյն խոկ Կանտին հաստատել, որ բարոյական օրէնքի հաւատն անժողատրելի է առանց անմահութեան հաւատի:

Հետևաբար, եթէ որոնենք մի այնպիսի նպատակ, որը կեանքին միտք տար, երկրային կեանքի սահմանների մէջ, ապա մենք պէտք է որոնէինք, ոչ այլ կերպ, ինչպէս նպատակի կատարման մէջ, որ ցոյց է տալիս բարոյական օրէնքը, ըստ որում դա միայն ունի անպայման պարտաւորութիւն և հէնց այդ հիման վերայ էլ այդ օրէնքից յառաջացած նպատակը կարող է մեր կեանքին միտք տալ: Բայց ինչ է գուրս գալիս այդ բանից: Բարոյական պարտականութեան պարտաւորութիւնը ինքը փոխագրուում է ամենամեծ անմտութեան, եթէ չկայ անմահութիւն, որովհետեւ այն նպատակը, որը ձգտում է դէպի բարոյական օրէնքը, բոլորսին անիրագործելի է դառնում երկրային կեանքի սահմաններում: Ահաւասիկ, եթէ ես ուգում եմ հաւատալ, որ բարոյական օրէնքի նպատակի իրագործումն տալիս է իմ կեանքիս միտք, այն ժամանակ ես պէտք է հաւատամ նաև անմահութիւնը: Եթէ ես չեմ կարող կամ չեմ ուզում հաւատալ անմահութիւնը, այն ժամանակ ես պէտք է դարձարեմ փոխակցութեան համեմ, որ եմ ոյժի չափ գործում եմ համաձայն բարձրագոյն երանութեան (I. c. եր. 46): Տարօրինակ բան. Եթէ ես իմ կեանքի նպատակը համարեմ ընդհանուր բաղդաւորութիւնը, ապա այդպիսի նպատակը չէ կարող իմ կեանքիս միտք տալ, որովհետեւ արդէն որոշեցինք, որ մի նպատակը չէ կարող իրականանալ: Բայց եթէ ես իմ կեանքի նպատակը համարեմ միայն այն բանի գիտակցութիւնը, որ իմ գործունէութիւնն իմ ոյժի չափ ուզգուած է այդ նպատակի իրագործմանը, այն ժամանակ այստեղից յանկարծ կը յառաջանայ այնպիսի վայելչութիւն, որ նա իմ կեանքիս միտք կը տայ:

Մակի իրազործման: Բայց դա պէտք է լինի մի այնպիսի նպատակ, որը համապատասխանէր բարոյական օրէնքի նպատակին:

Յամենայն դէպքո՝ մի այգալիսի փորձ գոյութիւն ունի և մենք պէտք է աշքի անցկացնենք: Դա արուած է այն գրքոյի հեղինակի ձեռքով, որի մասին ես յաճախ յիշեցի. «կեանքին նպատակ դնել, ասում է նա, մի անիրագործելի բան, ի հարկէ, անմիտ է... ուստի ընդհանուր բաղդաւորութիւնը չէ կարող մի այնպիսի նպատակ լի նել: Բայց դա կարող է մի այլ բան չինել, որը ոչ թէ միայն շրացասէր ընդհանուր բաղդաւորութիւնը, այլ և ազգակից լինէր այդ բարձր գաղափարին: Ես չեմ կարող իրականացնել ընդհանուր բաղդաւորութիւնը, բայց կարող եմ հասնել գիտակցութեան, որ ես անում եմ ինձնից կախումն ունեցող ամեն բան ընդհանուր բաղդաւորութիւնը իրականացնելու և այդ գիտակցութիւնը կարող է ինձ տալ մեծ վայելչութիւն: Ես կարող եմ յառաջադիմել այդ գործունէութեան մէջ, երբ թշնամական ջանքերը կամ անյաջող հանգամանքներն իմ առաջ չլուրին, բայց ինձնից է կախուած յառաջադիմել կամ անյաջողութեան հանդիպել, եթէ ես կեանքի նպատակը կը կը ամարեմ գիտակցութեան համեմը, որ ես իմ ոյժի չափ գործում եմ համաձայն բարձրագոյն երանութեան (I. c. եր. 46): Տարօրինակ բան. Եթէ ես իմ կեանքի նպատակը համարեմ ընդհանուր բաղդաւորութիւնը, ապա այդպիսի նպատակը չէ կարող իմ կեանքիս միտք տալ, որովհետեւ արդէն որոշեցինք, որ մի նպատակը չէ կարող իրականանալ: Բայց եթէ ես իմ կեանքի նպատակը համարեմ միայն այն բանի գիտակցութիւնը, որ իմ գործունէութիւնն իմ ոյժի չափ ուզգուած է այդ նպատակի իրագործմանը, այն ժամանակ այստեղից յանկարծ կը յառաջանայ այնպիսի վայելչութիւն, որ նա իմ կեանքիս միտք կը տայ:

Բաւական է, հակառակը չինի: Երբ մարդ ձգտում է մի որի բարձր նպատակի և չէ կատածում այն բանի մէջ, որ նա անիրագործելի է, այլ ընդհակառակին հաւատում է, որ նա կ'իրագործուի, այն ժամանակ նա ինչպիսի յաջողութիւնների էլ հանդիպի իւր ձըգտումների մէջ դէպի այն նպատակը, նա այսու ամենայնիւ կուրախանայ իւր գործունէութեան վերայ, որն ուզգուած է այդ նպատա-

կի իրագործմանը. Նրան մխիթարում և ողևորում է այդ նպատակի արժեքի գիտակցութիւնը և այն ցնորական երեակայութիւնը, որ այդ նպատակի իրագործելի է: Բայց ինչպէս որ նա կըհասկանայ նրա անիրազործելի լինելը այն ժամանակ այն գիտակցութիւնը, որ իւր ամբողջ գործունէութիւնը միայն պէտք է ուզուած լինի դէպի մի այգալիսի անիրազործելի նպատակ, նորան այդ բանը սաստիկ կըշարչարէ: Այգալիսի մի նպատակը կըմոլորեցնէ նորան: Միթէ կարելի է գտնել մի որևէ անհատ, որը թէկ հասկանար թէ ինչպիսի անիրազործելի բան է իւր ստուերի բռնելը, այսու ամենայնիւ նրան հաճելի կըթուէր, որ նա իւր ոյժի չափ ձգտում է դէպի այդ անիրազործելի բանը և իւր կեանքը նուիրում է նոյնանման փորձերի, որ նա գիտակցութեամբ կատարում է ամեն բան, ինչ կախուած է իրանից իւր ստուերը բռնելու համար: Մինչգեռ Գեօթէի Փառուտը գիտութիւնը համարում էր մի իրագործելի բան, նա իւր գիտակցութեան մէջ ուրախանուում էր այն բանով, որ նա ամեն ջանք գործադրել է գիտութեան համելու: Բայց երբ նա տակաւին նկատեց, որ մոլորուած է ու անկարելի է այդ նպատակին համել, որ նորա ձգտումներն անհետանք կորած են, նա իւր մէջ մինչև անգամ առելութիւն զգաց դէպի կեանքը:

Մի խօսքով ամենուրէք շվառում ենք մենք միևնոյն եղբակացութեան, կամ պէտք է ուրախալ կեանքի մաքին հաւատալը (սորա հետ և միասին բարոյական օրէնքի միաբը) կամ թէ հաւատալով այդ վերջնին, պէտք է հաւատանք անձնական անմահութիւնը: Բայց ինձ կասեն, թէ գա մի պայմանական եղբակացութիւն է. նա չէ ասում, թէ արժէ հաւատալ կեանքի խոըհուրդը, այս ցոյց է տալիս թէ գա ինչ պայմանների ներքոյ թոյլտրելի է հաստատել: Աւելի և՝ այս բոլոր գատողութիւններից պարզ երեսում է, որ քըննադատական գիլիսոփայութիւնը պէտք է ընդունի կեանքի խորհրդի հաւատի գիտականօրէն չապացուցուած անհրաժեշտութիւնը. և իրօք կեանքի խորհրդի հաւատի թոյլտրելի լինելն պայմանաւորուած է անմահութեան հաւատով և կրիտիրական գիլիսոփայութիւնը համարում է անմահութեան հարցը գիտականօրէն անլուծելի և լողում է հաւատին այս կամ այն տեսակէտից վճռելի հարկ է ով հաւա-

տում է բարոյական պարտախանութեան պարտաւորութիւնը, նա ըստ կրիտիրական գիլիսոփայութեան պէտք է (տրամաբանօրէն պարտաւոր է) հաւատալ անմահութիւնը, ոորա հետ միասին և կեանքի խորհուրդը: Բայց միթէ կարելի է գիտական ճանապարհով ապացուցել, որ մենք պէտք է հաւատանք բարոյական օրէնքի պարտաւորութիւնը, եթէ մէկը ցանկանար բացատրել այդ. ի հարկէ ոչ որովհետեւ այգալիսի բացասութիւնը հերքելու համար, անկարելի էր մի որևէ փաստի վերայ հիմնուել: Այգալիսի անձնաւորութեան կարող են համոզել ոչ գիտական սկզբունքները, այլ միայն կեանքը, այսինքն մի կողմից մարդկանց օրինակի աղդեցութիւնը, որոնք հաւատում են բարոյական պարտաւորութիւնը, միակողմից՝ այն անհետանք փորձերն ուրանալ հաւատն ոչ թէ խօսքերով, այլ իւր ամբողջ էութեամբ: Իրօք, եթէ մէկը հերքում է բարոյական պարտաւորութիւնը, այն ժամանակ չէ կարելի նրան համոզելու համար, դիմել մի որևէ պարտաւորութեան ընդունելութեան, որովհետեւ ամեն մի պարտաւորութիւն սկզբունքով հերքում է: Ուստի մենք իրաւունք ունինք հիմնուել միմիայն փաստերի վերայ: Բայց փաստերը արտայացուած են միշտ այն միայն, ինչ գոյութիւն ունի, լինում է, կատարում է, այլ ոչ այն, թէ ինչպէս է լինելու կամ ինչ պէտք է լինի, եթէ ոչ որից էլ չկատարուի: Ուստի փաստերից չէ կարելի եղրակացնել բարոյական օրէնքի ոչ հաստատութիւնը և ոչ էլ նրա բացասութիւնը: Մի խօսքով. բացելով կեանքի խորհրդի հաւատի և անմահութեան հաւատի տրամաբանական կապը, մենք միևնոյն ժամանակ անոյժ ենք վճռելու գուտ գիտական ճանապարհով, թէ արդեօք պէտք է հաւատալ կեանքի խորհրդը: Բայց ինչ կըհարցնեն. ինչումն է կայանում մեր եղրակացութեան գործնական նշանակութիւնը: Պատասխանը շատ պարզ է. արմատախիլ անել այն, ինչ որ կոչում է մտաւոր մոլութիւն, որը գուցէ բոլոր մոլութիւններից վատագոյնն է: Մատերիալիստների իշխանութեան և գիլիսոփայութեան կատարեալ անկման աղդեցութեան ներքոյ շատ մարդիկ կորցրել են իրենց սովորութիւնը հաւատալու անմահութիւնը. մինչեւ անգամ ծագրում են այդ վերջնինը և միևնոյն ժամանակ խօսում են կեանքի խորհրդի մասին, շարունակում են հաւա-

տալ այդ վերջինը, այդպիսով մոլորեցնում իրենց խոհականութիւնը աստիճանաբար ընտելացնելով այդ վերջինը անհետեղութեան և անտրամաբանականութեան և դորանով առ հասարակ բժացնում են իրենց ընդունակութիւնը զգալու ճշմարտութիւնը։ Եւ ահա մեր եղրակացութիւնը օժանդակում է այդպիսի մի մոլութեան առաջն առնելու, որովհետեւ նա մեղանից անմիջապէս պահանջում է հրաժարուել անհետեղական մատերիալիստականութիւնից, ստիպում է մեզ կամ հաւատալ անմահութիւնը կամ դաւնալ կատարեալ հետեղական մատերիալիստ, այսինքն չհաւատալով անմահութիւնը, թողնել հաւատալու և կեանքի խորհուրդը, սորա հետ ի միասին բարոյական պարտականութեան պտրտաւորութիւնը և եթէ կատարելու լինիք բարոյականութեան պահանջները, ոչ այն պատճառաւ, որ այդ վերջիններին առանց անմահութեան հաւատի կարելի կըլինէր վերագրել խորհուրդ, այլ միայն նորա համար, որ մենք վազուց ի վեր սովորել ենք այդպէս վարուել։ Ահաւասիկ անհետեղական մատերիալիստականութեան այդ սովորութիւնների, որ բժացնում են մեր մտաւոր ոյժը, որ բժացնում են մեր մէջ ճշմարտութեան զգացումն, առաջն առնելու մէջ է կայանում մեր եղրակացութեան գործնական նշանակութիւնը։

Ճատելն ասում են, որ դա վտանգաւոր եղրակացութիւնն է և բնորոշում են հետեւալ դատուութեամբ։ Իմ սեփական խօսքերից երեսում է, որ մեր մէջ սաստիկ տարածուած է անմահութեան չհաւատալու սովորութիւնը։ և ահա վախենում են, որ այդ սովորութեան պատճառաւ եթէ մեր եղրակացութիւնը չընդունուեց, ոչ թէ կըտարածէ անմահութեան հաւատն, այլ աւելի ուժեղ կ'ամրապնդի կեանքի խորհրդի և բարոյական օրէնքի պարտաւորութեան չընաւատալը։ Ուրիշ խօսքերով՝ վախենում են, որ մեր եղրակացութիւնը, թէ կըոչնչացնի անհետեղական մատերիալիստականութիւնը, բայց այդ անելով կըյառաջացնէ հետեղական մատերիալիստականութիւնը։ Ի հարկէ ով որ չէ հաւատում բարութիւնը, նա կարող է մեր եղրակացութիւնը վտանգաւոր գտնել և արժան կըհամարէր այդ վերջինը ծածկել ամբոխից, որը փիլիսոփայութեան հետ ծանօթ չէ։ Բայց ով հաստատ չաւատում է բարութեան ոյժը, նա համարձակ

կ'առաջարկէ մարդկանց կատարեալ հետեղաբար իւր ամբողջ էութեամբ հրաւիրուել (կարիք չկայ կատարել գործով, բաւական է անել այդ երեակայութեամբ) ընդունել բարոյական պարտականութեան պարտաւորութիւնը, սորա հետ ի միասին կեանքի խորհուրդը (այնպէս հետեղական կերպիւ հրաժարուել, որ թոյլտրելի համարել ընդունել երեխայական մսից կոտլետ ուտել և կրթական տները գարձնել երեխաներին մորթելու համար լաւ կերակրելու հիմնարկութիւններ)։ որովհետեւ մի այդպիսի մարդը հաստատ համոզուած է, որ այդպիսի փորձերի միջոցաւ մարդիկ ոչ մի ժամանակ չեն դառնալ հետեղական մատերիալիստներ, այլ ընդհակառակն ուրախութեամբ հաւատալ անմահութիւնը։ Հետեւաբար այն մարդն, որ հաւատում է բարութեան ոյժը, նա կըհաւատայ և ճշմարտութեան անվտանգ լինեն և փոխանակ մեր եղրակացութեան անշափ վտանգաւոր կըհամարէ այն մտաւոր մոլութիւնը, որ յառաջ է գալիս, արտայայտում է անհետեղական մատերիալիստականութեան միջոցով։

Պ Ե Բ Զ



1679

0025866

2018



